

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆՑԵԱԼ ՍԸ

Երեսուն տարի առաջ Հայոց Պատրիարքարանն Իւրան ներկայացուած Հարստահարութեանց Տեղեկագիրը զոր այս ԼՂերուն մէջ կը համառօտենք, յիշեցնել կուտայ անցեալ մը որ գրեթէ մոռցուելու վրայ էր, մասնաւորապէս Հայաստանէն դուրս գտնուողներուն համար: Բարեկարգութեանց ծրագիրը որ այս վերջին տարիներս մանաւանդ երբ աւելի քան երբեք տաղնապալից պայմաններու մէջ կը յազուի, կարգ մը ճշմարտութիւններ կը վրիպեցնէ Հայ ազգին ուշադրութեան: Այս հրատարակութիւնը, ինչպէս նաև անոր յաջորդելիք մասը, շատ մօտաւոր անցեալ մը հայուն յիշեցնելով պիտի ազդեն ազգին մը աածելու եղանակին վրայ:

Հայ մը որ կարգայ այլ 1870ի տեղեկագիրը պահ մը պիտի կարծէ թէ արդեօք թուականներու շփոթութիւն կայ. երէկուան աղէտներուն արձանագրութիւններն են թէ՛ այսօրուան. Մէհիտի թէ Համիտի օրերը զործուած օճիւրներու պատմութիւնները կը լսենք: Այն պահուն իսկ երբ Հայաստանէն մեզի դուրս կը հասնին որ թէ սովի եւ թէ տուրքի հարուածներու ներքե խելակորոյս եղող հայր կ'իտլամանան, ինչ ահեղ այժմէութիւն կարգալ երեսուն տարի առաջուան տեղեկագրութիւն մըն ալ որ ճիշդ ու ճիշդ միեւնոյն աղէտները կ'արձանագրէ: Օսմանեան կայսրութիւնը կառավարողը բռնապետ սուլթան Համիտ մը ըլլայ թէ երոպականացեալ մեծահամբաւ Րէշիտ, Փուատ, Այի փաշաները, թրքական վարչութիւնը անփոփոխ է, վասն զի ո՛չ իսլամութիւնը փոխուած է, ո՛չ տիրապետող ցեղին ձգտումը: Քրիստոնեան իր բնիկ հայրենիքին մէջ բարոյապէս ու նիւթապէս փճացնելու քաղաքականութիւնը անխտոր ուղղութեամբ կը յառաջանայ: Սուլթան Համիտ իր նախորդներուն կատարելագործութիւնը եղաւ, ու իր յաջորդը զինքը պիտի գերազանցէ, եթէ երոպական հսկողութեան ներքե չի դրուի օսմանեան պետութիւնը:

Այդ տեղեկագրին մէջ Հայաստանի իսլամներուն տառապեալ վիճակը նկատողութեան չէ առնուած: Եւ արտ. ալ Հայոց Ազգային Ժողով մը օսմանեան խորհրդը

զարան մը չէր որ երկրին ընդհանուր բարեկարգութեան հարցովը զբաղելու իրաւունքն զգար իր մէջը: Բայց կը դիտենք թէ Հայ Յանձնաժողովը կը ջանայ թիւրքիոյ ընդհանուր քրիստոնեաներուն բերանը համարուիլ: Կրցածին չափ կ'օգտուի առիթներէն փոխանակ «Հայ» ու զօր. ծածկ «քրիստոնեայ բացատրութիւնը»:

Արդարեւ իսլամներն ալ միշտ ճնշուեր են ու կը ճնշուին, բայց ոչ թէ իրենց ցեղային փճացմանը ձգտող որոշ քաղաքականութեան մը ծրագրին հետեանքներովը, այլ պարզապէս վատթար վարչութեան մը երեսէն: Այն բռնապետական երկիրներու մէջ ժողովուրդը իր համացեղ կառավարիչներէն կը կեղեքուի, բազմատեսակ անիրաւութեանց զոհ կ'երթայ: Նոյն իսկ սահմանադրական ազատութիւնն ալ ամէն ատեն եւ ամէն տեղ երաշխաւորութիւն չընձայեր ժողովրդին: Իտալական նահանգներէն շատը այնպէս թշուառ են ինչպէս ուսական բազմաթիւ կառավարչութիւնները, կամ ամբողջ թիւրքիան: Բայց իսլամները բարոյական ազատութիւն կը վայելն. ուրիշ կրօնքի պատկանող Հայրենակիցներու առջեւ ստրկանալու հարկէն ազատ են. ու իրենց մէկ մասը, մանաւանդ կարեւոր դերը վայելողները, ամէն ազատութիւն ունին քրիստոնեայ ժողովուրդը կեղեքելով ե իրեն ճորտ զործածելով հանգստօրէն ապրիլ: Իսկ քրիստոնեան թէ՛ ինքնին վատթար վարչութեան մը եւ թէ յատկապէս իր տկարացմանն ու կործանումին համար զծուած քաղաքականութեան մը զոհն է:

Այս վերջին տարուան աղէտները Հայոց գոնէ մէկ մասին՝ մասնաւորապէս Հայաստանի ժամանակաչից կեանքը որոշապէս չզիտցողներուն, կորսնցնել տուին անցեալին թելը: Սուլթան Համիտ շարունակութիւն մըն է, կատարելագործեալ, որ պիտի շարունակուի եթէ թիւրքիան ինքն իր գլխուն մնայ: Հայոց Ազգային Ժողովն է որ երբետուն տարի առաջ կը պոռայ թէ Հայ ազգը կը հիւժի, կը կոտորի, կը փճանայ իր երկրին մէջ: Ու եթէ ունեցած ըլլայինք օրինաւոր վիճակագրութիւն մը անիկայ մեզի պիտի ցոյց տար 1855էն 1895 մէր կորուստին մեծութեան որքանութիւնը: Քառասուն տարուան մէջ Հայը Հայաստան հեռահեռ նուազեր է, մինչդեռ պէտք էր որ գոնէ թուով կրկնապատկուած ըլլար:

Ու եթէ օրուան դժբաղդութեանց արհուրածութիւնը պահ

մը մեզի մոռցնել կուտայ այդ մտաւոր անցեալը — եթէ երբեք կրնանք անցեալ կոչել չարչարանքներու կեանք մը որ անդադրում շարունակութեամբ կը յարատեւէ — նմանապէս հիմակուան Հայաստանասէր աշխատութիւնները, զոհողութիւնները մեզի պահ մը մոռցնել կուտան թէ նախորդ սերունդն է որ ուզեցապէս ձեռք առաւ հայ հայրենիքի ազլաններուն բարձրան խնդիրը:

Յանձնաժողովին Տեղեկագիրը Ազգային ցասման պոռթկումն է: Անոր մէջ խոշոր բառեր չի կան, ամականներու չենք հանդիպիր. պաշտօնական գրութիւն մըն է պաղարին հանդարտութեամբ գրուած, եւ սակայն երեսուն տարի ետքը իսկ զայն կարգացողին ոգին կը սարսըռի. զգածեալ տխրութեամբ համակուած է ամբողջ զբութիւնը: Անխրաւութեանց զէմ բողոքի ուժգին գոռումն է, իր շփօրը թուանշաններն ըլլալով: Քանի մը էջերու մէջ կը խտանան Հայաստանի բոլոր տանջանքները, տառապանքները, աչքերու պառնակները կը պարզուին Կ. Պոլսոյ բարձրագոյն իշխանութեան բոլոր ոճրագործութիւնները Հայ աշխարհին դէմ: Ու ակնեք կը տեսնուի թէ էն ծանր հարուածները միշտ գիւղացի հայ ժողովրդին զլուսն կը տեղացնեն: Հայութեան ոգին ու էութիւնը իր մէջ զօրեղապէս պահպանող ժողովուրդն է զոր ազատացնելու, թշուառացնելու, շարչարելու, կոտորելու, եւ վերջը վերջը զայն իսլամութեան անդունդը գահավիժել տալու կը տքնի Կ. Պոլսոյ կեդրոնը, իրեն ոգին ներշնչելով ամբողջ վարչական մարմինն, ու անկէ իսլամ ժողովրդին, որուն մէկ մասը նախկին քրիստոնեայ հայեր ըլլալով սրտերնուն մէջէն բնագոյ մը զիրենք իրենց արեւակիցներուն համար համակրութեան կը մղէ: Այդ զգացումը զօրանալով օր մը կրնայ քաղաքական ծանր հետեւանքներ արտադրել:

Տեղեկագիրը իր ամբողջութեամբ շատ քաղաքագիտական ոճով գրուած է: Երկիրը եւ անոր վարիչները հիմնովին ճանչցող մարդիկ են խմբագիրները. սուլթանին նկատմամբ ո՛ր է ակնարկութիւն չի կայ. խնայուած են նախարարներն ալ. միանգամայն կուսակալները, բարձրագոյն իշխանութիւնը խնդրի առարկայ չեն. ո՛չ զովստ ո՛չ պարսաւ անոնց համար: Եւ սակայն ամէն մարդ ինքնիրենը կը հարցնէ ո՞ր է ձեռքը որ կը վարէ միւթէսարքը, հաքիմը, միւտիրը, միւլթէզիմը, որ պէյն ու աղան կը քաշալերէ, եւ կը զրգո՞ւ իսլամ ուսմիկ ժողովուրդը: Ու հետեւելով մահուան ստուերին որ տարածուած է Հայաստանի վրայ, կը հասնի մինչեւ Պոլիս, ու հոն Պապը—Ալիի մէջ կը տեսնէ վիթխարի ոճրագործական մարմինը որուն շուքը կը սփռի մինչեւ հայ աշխարհը:

Քաղաքագետ խմբագիրները նաև ներկայացուցիչներն են ազգի մը ինքնազուսպ զանոնութեան զգացումին: Բարձր կը պահեն հայ ցեղին արժանապատուութիւնը: Պաղատող, աղերսարկու հեծեծանք մը չէ որ կը լսուի այդ տեղեկագրին մէջ: Արդար պահանջումի խրոխտ ձայնն է որ կը հնչուի: Հայ ազգը շնորհ մը չէ որ կը խնդրէ, իրաւունք մը կուզէ: Ու պետութեան մը մէջ ուր անհատին

կեանքն իսկ կայսերական շնորհ կը համարուի, իրաւունք եւ Արդարութիւն պահանջող մարմինը արդէն իսկ յեղափոխական գաղափարը կը մարմնացնէ:

Չենք կրնար զիտնալ թէ այդ ծանրակշիւ տեղեկագրին արդիւնքը ինչ պիտի ըլլար եթէ Ալի փաշա չմեռնէր: Պիտի զգա՞ր թէ հինգ դար լուսութեան մէջլացող հայը երբ ձայն կը բարձրացնէ, այդ համարձակութիւնը նշան մըն է թէ նոր թուական մը կը բացուի օսմանեան կայսրութեան համար: Ժողովուրդներուն համբերութեան չափը ընցուած է, եւ քայքայման հեռապատկերը սպանալից կը պարզուի: Բայց եթէ այդ սատրաղամը որ թիւրքիոյ ամենահզօր կառավարիչն էր, բարեկարգութեանց պէտքն ըլլալով, իր խորհուրդները պիտի կարենա՞ր իրագործել: Ո՛չ, եթէ թիւրքեան թիւրքերով բարեկարգելու գաղափարին ծառայէր. եւ չէր կրնար ուրիշ գաղափար ալ ունենալ. Նոյն իսկ անկեղծօրէն բարի կամեցողութիւն մը բաւական չէ բազմադարեան դրութիւն մը շնչելու. նոր վարչական մարդիկ իրատեսներով չեն ծնիր. ու ցեղի մը նկարագիրն ալ զիրաւ չփոխուիր: Ուժը միայն կրնայ փոխել թիւրքիոյ վարչական կազմակերպութիւնը: Առանց այդ ուժին միջամտութեան ո՛ր է նահանգ շարեկարգուեցաւ: Հարստահարութեանց քննիչ Յանձնաժողովը իր տեղեկագրին միջոցաւ այդ ճշմարտութիւնը պարզեց: Չգացինք թէ Հայաստանի կացութիւնը չի կրնար փոխուիլ առանց մաքառումի: Այդ թուականէն յետոյ մեր պատմութիւնը նոր շրջանի մը մէջ կը մտնէ, նոր գաղափարներու ազդեցութեան ներքէ:

Խորմեան Հայրիկ եւ իր շուրջը բոլորած Յանձնախումբը ու Ազգային ժողովը թրքական վարչութեան հրահրութիւնը երևան հանեցին առանց վարանումի համարձակ քաղաքականութեամբ մը: Հաստատեցին թէ անհնարին է որ Դուռը Հայաստան ո՛ր է բարեկարգութիւն մտցնելու արամադրութիւն կամ կարողութիւն սնենայ: Ու երբ քանի մը տարի ետքը Արևելեան խնդիրը պայթեցաւ ոչ ոք մտաբերեց Հայոց երեսին տալ թէ մինչեւ վերջին պահուն թիւրք վարչութեան զէմ ո՛ր է գանդատ չյայտնել յետոյ ահա յանկարծ պարագաներէն կուզեն օգտուիլ, անհիմն ամբաստանութիւններ ընելով թիւրք վարչութեան զէմ: Այն ժողովուրդը որ զինքը ներկայացնող հեղինակութեան բերնով 1870ին բողոքի ձայն բարձրացուցած էր օսմանեան վարչութեան զէմ, նոյն ժողովուրդը 1878ին ալ ազատօրէն բողոքելու իրաւունքը կը վայելէր:

Հայկական խնդիրը ծագելով 1870ին ահա երեսուն տարի էօրէ օր կը յառաջանայ հակառակ ամէն ընդդիմադիր խոչընդոտի: Չի կրնար փակուիլ առանց Հայաստան եւրոպական վարչութիւն մը հաստատուելու: Երբեք չմոռնանք անոնք որ իրենց օրերուն մէջ կուուեցան, սպառախիւ հեռատեսութիւնը ունեցան:

ՀԱՅՈՒՆ ՈՒՂԵՂԸ

ՀԱՅՈՒՆ ՅՈՌԵՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Արինոտ օրերէն յետոյ, երբ հայերու խումբեր, ցըրուեցան աշխարհիս չորս անկիւնները, շատ մը երեսոյթ զիտեցի որոնց գոյութեանը տեղեկութիւն չունէի զեռ: Դիտեցի թէ յոռետեսութեան յիմար հով մը կը փչէ մեր ցաւատանը ցեղին վրայ. դիտեցի թէ երիտասարդներ, որոնք միայն Ղլային կը ճանչնայի, յոռետեսներ են զարցեր. զիտեցի թէ տիրութեան ու ցաւերու օրերու մէջ, երբ ամէնքնիս ուժի ու կամքի պէտքը կը զգայինք, գտնուեցան երիտասարդներ որոնք մահուան ծոցը փնտռեցին այն հանգիստը զոր իրենց կը զլանար Եւրոպա: Դիտեցի բարբերու ապականութիւն մը եւ ուրիշ երեւոյթներ որոնց զիմաց հոգեբան մը անտարբեր չկրնար մնալ:

Ամէն ֆիզիզական կամ բարոյական յեղաշրջում իր պատճառները ունի: Ու շատերու պէս փոխանակ մեռնէ զուրս, օտարին մէջ փնտռելու այն պատճառները որոնք տկարացուցին հայուն ուղեղը, իր բարոյական առումով, մեր մէջը նայեցայ, մեր մէջը փնտռեցի գանոնք ու հոն գտայ: Պատճառներու այս փնտտուքիս մէջ զրի բժիշկի մը անտարբերութիւնը, անկողմնակալութիւնը: Արդիւնքները ու պատճառները քննեցի, կշռեցի ու հիմա կը խորհիմ թէ ցոյց տալով անոնք, ծառայութիւն մը ըրած կ'ըլլամ կարելի է: Ետեւ կը խորհն մեզի օտարին մէկ քանի զովեստները մէջ բերելով. մեծ ցեղի, խելացի ազգի մը համար կը շինեն մեր շուրջը: Ես ասոնց մէջ չեմ շլանար: Գովեստները զմայլեցնելու չեն մեզի: Պակասութիւններ ունինք, ցեղային, անոնց վրայ ալ պէտք է խորհինք: Չարդերը հիմնովին խախտեցին մեր Ղլային դրութիւնը. արդիւնքը եղաւ այն երեսոյթները որոնց վերայ պիտի խօսիմ: Պիտի ջանամ, մեր մէջը, մեր ցաւերուն վրայ զրել, մեր հիւանդ կողմերը ցոյց տալ, անոնց պատճառները զննել ու հասնիլ առողջապահութեան մը զոր հոգիները պիտի անուանեմ, ուղեղինը պիտի ուզեմ որ ըլլայ եւ զոր էպպէս Ազգային առողջապահութիւնը պիտի ըլլայ: Ամէն ազգերէ աւելի մենք պէտք ունինք այդ առողջապահութեան:

Յոռետեսութիւնը զիս էն շատ տխրեցնող երեւոյթն է: Յաւերու եւ տիրութեան այդ հովը անցաւ մեր նոր սերունդին վրայէն մեր սոսկալի աղէտներուն հետեւալ օրն իսկ: Եւրոպա փախչող երիտասարդները հետերին բերին Ղլային գրգռութիւն մը, ուղեղի զիւրզգացութիւն մը, ու ասոնցմէ ծնաւ յոռետեսութիւնը:

Նախ տեսնենք թէ ինչ է յոռետեսութիւնը:

Ամէն ժամանակի մէջ գտնուած են մարդիկ որոնք փնտած են կեանքին պաղտնիքը: Մոլորած անոր սոսկալի յորձանքներուն մէջ, առանց գիտնալու թէ երբ սկսաւ ան, ու երբ պիտի վերջանայ, բայց կատարելապէս վստահ թէ ամէն բան կը ծնի ու կը մեռնի, թէ ամէն բան կը յոգնի եւ կ'անցնի, ու չկրնալով գտնալ նպատակը այս ամենուն, կեանքին ու մահուան տխուր մտահոգութեամբ մը լեցուած են: Կեանքը բաղդատելով իր անձանօթ նպատակին, իրենց հոգիին յոյզերը աշխարհի ցաւագարութեանց հետ, ու այս բաղդատութեանց հետ, ու այս բաղդատութեանց մէջ ցաւերու ահաւոր մեծութիւնը տեսնելով՝ լացած են օրերով: Չեն կրցած ըմբռնել արարչազորութեան վեհութիւնը, ու տխուր տխուր, աչքերնին մահուան սեւ հորիզոնին վրայ սեւեռած, թափստած են աշխարհի մէջ, ետեւուն քաշկոտելով իրենց հիւանդ մտքին հիւանդ արտայայտութիւնը, անիծելով ամէն բան, ծնողք ու արարիչ, ատելով կեանքը, տիեզերքը, արեւ ու ծաղիկը:

Ամէն երկիրներու մէջ գտնուած են այս հիւանդ երկակայութեան մեղամաղձոտ ներկայացուցիչները որոնք մղուած իրենց տկար ու անկատար ուղեղին յոռի հակումներէն, առանձնութեան մէջ բանտարկուած, իրենց լացերուն ու ողբերուն մրմունջներով լեցուցած են աշխարհ: Հիւանդներ եղած են ասոնք, մեղամաղձութեան վարկուած ու ամէն բան տխուր, սեւ, անկատար տեսած են:

Առաջին յոռետեսները բանաստեղծները եղած են, որոնք վայրկեանական ազդեցութեան մը տակ ատած են կեանքը, լացած են ամէն ամէն բանի վրայ. բայց արցունքները յարափոփոխ գաղափարներու ազդեցութեան տակ կաթկթած, չեն կրնար նկատուիլ յոռետես արտադրութիւններ: Հին բանաստեղծներու գործերուն մէջ կը գտնենք օրինակներ տխուր բանաստեղծութեան, վայրկեանական ու անցողակի յոռետեսութեան: Հեղուպոսի, Համբրոսի եւ ուրիշ շատերու գործոց մէջ կան արցունքոտ երեսներ, յոռետես տողեր. բայց հիւներուն ոչ յոռետեսութիւնը եւ ոչ ալ հոգեկան տիրութիւնը չկին կրնար մտնել ամբողջին մէջ, որ ուրախութեան ու հաճոյքներու մէջ կը գտնէր կեանքին պատճառը:

Յոռետեսութիւնը ԺԹ դարուն մէջ միայն կանոնաւոր մարմին մը առած ու դասական մեթոտի մը կարգը բարձրացած է. ու զիտուած է թէ այս առաջընթացութիւնը հետեւած է Ղլային հիւանդութեանց աճումին: Դարեր առաջ, կեանքին պայմանները նոյնը չեն եղած. քաղաքակրթութիւնը իր օրօրանիս մէջ զեռ չէ յոգնեցուցած մարդուն միտքը, ու կեանքը իր նախնական պարզութեան մէջ չէ պահանջած կորովի եւ կամքի այն ահադին ճիզը զոր պէտք է ընել այսօր: Յոռետեսութիւնը առաջընթացած է Ղլային դրութեան տկարութեան հետ, որ ինք ալ քաղաքակրթութեան ետեւէն է ընթացած: Բայց պէտք չէ հետեւցնել թէ քաղաքակրթութիւնը Ղլայինները շատցուցած ու յոռետեսներու թիւը բարձրացուցած ըլ-

լայ: Հազար տարբեր պատճառներ յոգնեցուցած են մարդուն ուղեղը եւ ջիղերը. չափազանց աշխատութիւնը, կեանքին ծանր պայքարը, ալքոլամոլութիւնը եւ ուրիշ մութիւնները բրին մարդիկը ջղայիներ: Ու յոռետեսները օգտուելով այս պատահողական պայմաններէն, պոռացած են բարձրաձայն թէ քաղաքակրթութիւնը աղիաբեր է եղած մարդկութեան:

Բաղաքակրթութեան դատը սակայն շատոնց տեսնուած է. անոր տուած բարիքները պէտք չունին ծանուցումի: Եթէ մորիկ այսօր աւելի դժբաղդ կը գտնեն զիրենք, քաղաքակրթութեանը չէ յանցանքը,

Այս դժգոհներուն մէջ էն շատ աղմուկ ընողները բանաստեղծներն են: Աշխատողը կեանքին մէջ կը հանդիպի ամէն վայրկեան դժուարութեանց, որոնց յաղթելու համար իր մէջը կը գտնէ պէտք եւ պիտի կորսուի, եւ յուսահատութիւնը՝ վերջնական յուսահատութիւնը՝ չի մտնիր անոր հոգիին մէջ: Կը տխրի խոչընդոտին դիմաց բայց չի յուսահատիր, որովհետեւ կամքը կը յաղթէ խոչընդոտին: Բանաստեղծը, որ կեանքին ամենէն պզտիկ պարագաները կը սիրէ նկարագրել, ունի տխրութեան ու յոռետեսութեան վայրկեաններ, որոնց միջոցին բարձրաձայն իր նզովքը կը թափէ Աստուծոյ երեսն ի վար, ու կը պոռայ քաղաքակրթութեան դէմ: Բայց անոնց ողբերը չեն կըրնար կասեցնել քաղաքակրթութեան գործը, որ տուած է ընդհանուրին ապրելու դիւրութիւններ, եւ մէկ քանիին ջղային տկարութիւններ: Մեծագոյնին շահը կը պահանջէ որ փոքրագոյնը զոհուի: Ու այդ փոքրագոյնին մէջէն են եղած ժի՛ գարու այն մէկ քանի յոռետեսները, որոնք յոռետեսութիւնը՝ իրոք գիտութիւն, մը փիլիսոփայական վարդապետութեան կարգ մը դրած են:

Ահա յոռետեսութիւնը դարերու շրջանին մէջ: Անցնելէ առաջ հայուն յոռետեսութեան, կուզեմ ակնարկ մը նետել յոռետեսութեան մեծ վարդապետներուն վրայ: Անոնց կեանքը, գաղափարները, պիտի վկայութեան կանչեմ ապացուցանելու համար հայ երիտասարդներէն անոնց որոնք վերջերս արտասահմանի լրագրութեան մէջ բերին յոռետես գրականութիւնը, թէ սխալ ճամբէ մը կը ընթանան հիւանդ միջավայրի մը մէջ, տխուր երկինքի մը տակ. թէ մեր ազգը պէտք ունի, ճիշդ հիմա, կորուսելու ու առողջ գրականութեան մը. թէ երիտասարդներն որ պիտի տան ամբողջ յոյսի եւ կամքի օրինակները:

Բարիկ

ՊՕՂՈՍ ՔՕԼՕԼԵԱՆ

ԺՂՄԱՆՈՒԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷԶԵՐ

ԾԱԳՈՒՄ

ՀԱՅՆԱԿԱՆ ԽՆԴԻՆ

Բ.

Առաջին յօդուածին մէջ պարզուեցաւ 1870 զեկտեմբերին Ազգային Ժողովէն ընտրուած քննիչ Յանձնաժողովի մը կազմութիւնը: Այդ մարմինն պաշտօնն էր Հայաստանի աղէտներուն պատճառները մանրամասնօրէն ուսումնասիրել եւ դարմանները մատնանիշ ընել: Յանձնաժողովին աշխատութիւնները պիտի պարզուին այս յօդուածին եւ շարունակութեանը մէջ:

* * *

Հարստահարութեանց քննիչ Յանձնաժողովը իր ըստանձնած ծանր պաշտօնը խղճմտօրէն կատարելու ամէն ապահովութիւնները ձեռք առաւ: Սկսաւ ուսումնասիրել քսան տարուան մէջ նահանգներէն Պատրիարքարան հասած հարստահարութեանց բոլոր տեղեկագիրները, ու Պատրիարքարանէն Դրան գրուած գանձատներու թաղերիները: Բայց ուզեց նաև օրուան կացութեան վրայ ևս ճշգրիտ գաղափար ստանալ, ուստի եւ առաջնորդարաններէն մանրամասն տեղեկագիրներ պահանջեց: Խրիմեան պատրիարք 1871 յունուար 4 թուակիր շրջաբերականով մը բոլոր Առաջնորդարաններուն իմացուց հարստահարութեանց քննիչ Յանձնաժողովի մը կազմութիւնը, եւ անոնցմէ պահանջեց մատնանիշ ընել իրենց նահանգներուն մէջ գործուած հարստահարութիւնները, վարչական գեղձսւմները: Այս աշխատութեան դիւրացումին համար Պատրիարքարանը իւրաքանչիւր շրջաբերականին կը կցէր նաև հարցարան մը, որուն պատասխանները ամէն մէկ առաջնորդարան լեցնելու պարտաւոր էր: Նաև՝ գաւառի ազգային իշխանութիւններէն կը խնդրուէր իրենց կարծիքները յայտնել ի մասին այն միջոցներուն որոնց շընորհիւ կարելի պիտի ըլլար դարմանել հայ ժողովրդին թշուառութիւնը: Հայրիկ իր շրջաբերականը կը վերջացնէր հետեւել տողերով: «Երբ Ազգային Ժողովը իր ուշադրութիւնը կը կեդրոնացնէ նահանգաբնակ ժողովրդին կացութեան վրայ, որուն արմատական դարման մը ընելու կը զբաղի, գուց որ հովին էք եւ առաջնորդը այդ միակնոյն ժողովուրդներուն, գուց ձեր բոլոր կարողութեամբը պէտք է օգնէք ժողովին իր ձեռնարկներուն մէջ, անոր հայթայթելով բոլոր օգտակար տեղեկութիւնները, զորս կամ գուց անձամբ պէտք է խմբադրէք կամ ուրիշներու օգնու»

թեամբ, Նանալով դուրս ձգել ինչ որ սխալ կամ անճիշդ կը թուի: Մեզի պէտք է հազարդէք այն իրողութիւնները միայն որոնք ստուգութիւնը եւ վաւերականութիւնը զուրկ անձամբ քննած և հաստատած պիտի ըլլաք:» Գրեթէ բոլոր նահանգները կը փութան պատասխանել պատրիարքարանին պահանջումներուն: Լուսթիւն կը պահեն հետևեալ պաւանները միայն՝ Իզմիր, Պրուսայ, Աղթամար, Սեբաստիա, Քէոթահայ, Մանճիլէ, Տիլլիսի, Բալու:

Յանձնաժողովը իր ձեռքը ունենալով բոլոր հինսուտը ստուգարանները զանոնք կը քննէ մի առ մի, իրարու կը բազմաթիւ եւ կը յանգի որոշ եղբակացութեանց: Հայաստանի ընդհանուր տառապանքները և անոնց պատճառները չորս դասի կը բաժնէ առանձինն զլուսթիւնով, զոր ահա մի առ մի կ'ամփոփեմ:



Հնչատանի տառապանքներուն պատճառները չորս զխաւոր բաժանումի մը մէջ ամփոփուած են: Առաջինը զբաւան է. երկրորդը՝ կը վերաբերի կառավարական պաշտօնէութեան զեղծումներուն. երրորդը զատարաններու շուրջը կը դառնայ. չորրորդը կը պարունակէ մասնաւոր հարստահարութիւնները:

Առաջին բաժանումին մանրամասնութիւններն են.

1. ՁԵՂԾՈՒՄ ՏՈՒՐԻԵՐՈՒ ՀԱՒԱՔ ԲԱՆ ԱՆՉ

Ձինուորական տուրքը. (Ասիեր Պետիլի). Գաւառներուն մէջ ո՛ր եւ է վիճակագրութիւն չի կայ. ուստի կառավարութիւնը մեծնողներուն, զաղծողներուն, անբեւութացեալներուն զինուորական տուրքը կը պահանջէ անխնայ թափով ժողովրդէն: Այս պատճառաւ քրիստոնեաներ իրենց հայրերուն հաւատքը կ'որանան որպէս զի զինուորական տուրք վճարելէ ազատին:

Քանի մը տեղերէ զիտել կուտան թէ զինուորական տուրքը կը պահանջուի ծերերուն եւ նորածին արուններուն համար ալ: Ուստի շատ անգամ կը պատահի որ ընտանիքի հայր մը, հինգ վեց զակի տէր, եւ ունենալով ծեր հայր մը կամ հիւանդոտ եղբայր մը, ստիպուած է անոնց համար ալ զինուորական տուրք վճարել:

Ուրիշ գաւառներ ալ զիտել կուտան թէ շատ տարիներէ ի վեր յետաձեռն զինուորական տուրքի զումարը այնքան մեծ է որ իրենց անկարելի պիտի ըլլայ զանոնք վճարել, նոյն իսկ ամբողջ ունեցածնին վճարելով:

2. ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԵՒ ՇԱՀՈՒ ՏՈՒՐԻ
(Էմլաք և Թեմէքքիա)

Քանի մը գաւառներ կը գանգաւին որ տուրքերու նոր օրէնքը իրենց կողմերը չգործադրուի, եւ տեղական իշխանութիւնները կը շարունակեն ժողովրդին վճարել տալ Սալեակէն եւ ուրիշ տուրքերը ճիշդ հին առհնուան պէս:

Իսկ այն գաւառները ուր նոր օրէնքը կը գործադրուի, անոնք ալ կը գանգաւին թէ կալուածական եւ շահու

տուրքերը արգարութեամբ չեն գանձուիր, թէ դնահատուները ճիշդ չեն, եւ ոչ-իսլամները իսլամներէն շատ աւելի մեծաքանակ տուրք կը վճարեն:

Գաւառի մը տեղեկագիրը կը յիշատակէ թէ տասը կալուած որ քահաճը 59,090 գահեկան արձանագրուած են, սակայն քահաճը Էմլաքը 527,942 գահեկան անցուցած է, եւ կալուածատէրերն ալ տուրքերնին ըստ այնմ կը վճարեն: Միևնոյն գանգաւները տեղի ունին նաև Թեմէքքիա տուրքերու համար ալ:

Շատ տեղուանք քեմէքքիա տուրքը կը պահանջուի նաև երկրագործներէն ու այն կիներէն որոնք տան ներքին աշխատութեան վատ ուրիշ գործ չեն ընեն:

Վերջապէս բռնաբարութիւնը այն աստիճանին հասած է որ մինչեւ իսկ խեղճ աղքատներու կարասիքը, նոյն իսկ անոնց էն կարեւոր գործիքը գրաւելով կը վաճառեն, եւ այս խեղճներն ալ բանտը կը դնեն անոնցմէ տուրք կտրուելու համար:

3. ՏԱՍԱՆՈՐԻ ԹԱՃՈՒՐԻ

(Իլրիզաւ)

Բոլոր տեղեկութիւնները միաձայնութեամբ կը հաստատեն թէ զեղծումները գործողները Պէյերը եւ կառավարական խորհուրդներուն (Մեմլուք Խուսրէ) անպաւններ են: Ասոնք օրէնքին շատ ակներեւ կերպով հակառակ չգործելու համար տասանորդներու աճուրդը իրենց չեն աններ, բայց իրենց սղոցը, ծառաներուն կամ մարդոցը առնել կուտան:

Օրէնքին զրած արդեւ իսկ կրնայ ենթադրել տալ թէ ինչ տառապանքներ չի կրնար ժողովուրդը երբ հանրային պաշտօն ունեցողները ծամածուռ ճամբաներով այդ արդեւքը կ'ոչնչացնեն: Այդ պաշտօնեաները չեն վախար աճուրդին զինքը բարձրացնելէ, վասն զի առաջուց զիտեն թէ ամէն տեսակ միջոցներով պիտի կրնան ժողովրդէն յախշտակել ինչ որ իրենց պիտի վճարեն կառավարութեան:

Տասանորդը նոյն իսկ բերքէն չեն աններ. այլ իրենց ուզածին պէս հունձքին զին մը կը դնեն եւ տասանորդը քտակով հատուցանել կը պահանջեն, ու պղնձ զրամ ալ չեն ընդունիր: Եթէ գեղացին գիմաղբէ, հարկահաւաքները կը ձգեն կը քաշուին. եւ որովհետեւ գեղացին չի կրնար իր հունձքը ներս աննել մինչեւ որ տասանորդը չվճարէ, ուստի եւ հունձքը բաց օդին կը թնայ, աւրուելու ամէն տեսակ վտանգի ենթարկուած. երբ ամբողջ հունձքին փճացումը անխուսափելի կերելի, միջոցները կը վերադառնայ, եւ առջի ուզածին կրկինը կը պահանջէ:

Նոյն իսկ տասանորդ կ'անուի պարտէզի բերքերէն որոնք տան պէտքերուն սահմանուած են:

Իսկ եթէ տասանորդը նոյն իսկ տուրքերէն անուի, գեղացիները պարտաւոր են հունձքը իրենց անձամբ տանել, եւ օրերով սպասել պետական շտեմարանին առ

ջեւ, որպէս զի տարածնին կշռուի ու ներս առնուի:

Ետ անգամ ալ աճուրդը ուշ կը կատարուի, հ. ւն. քէն ետքը, որով միշտեղիւնները առնին չեն երթար ի դերը, եւ հնձուածը բաց օգին մէջ կը մնայ եւ կ'աւր. փ. սակայն հարկաւաքը երբ կը ներկայանայ, բնաւ կ'ըր. տրութիւն չընծայիր իրաց այս վիճակին եւ ապրանքը իրր լաւ տեսակէն նկատելով ըստ այնմ զին կը զնէ և տ. րքը ստակով կը գանձէ:

Այս պարագային մէջ գեղին երեւելիներն ալ (չորպա. ձի) հարկահաւաքներուն մեղսակից կը գտնուին, որով խեղճ գեղացին ամէն տեսակ տառապանքի ենթակայ է. դատաւորին առջև կը տարուի, կը շարժարուի եւ բանտ կը նետուի: Պաշտօնեաներն ալ միշտեղիւններուն մեղսա. կից ըլլալով այս վերջիններուն շահերը կը պաշտպանեն միայն:

Խեղճ երկրագործը, ա'լ ճարահատեայ, կուտայ ինչ որ ունի, եւ դարձեալ կարող չէ ազատիլ միշտեղիւններու պահանջութիւններէն:

Չմբան մօտ, և երբեմն ալ ձմեռ, միշտեղիւններու գե. դերը տուած այցելութիւնը մշտական վտանգ մըն է գե. ղացիներուն համար, որոնք պարտաւորուած են ձրիաբար սնուցանել հարկահաւաքները և անոնց հետևողները: Այս մարդիկը առանց խղճահարութեան ուզածնուն պէս եր. կար առնն կը մեան գեղերը, եւ հնար եղածին շափ գե. ղացիներուն համար կործանարար կ'ըլլան:

Ետ անգամ կը պատահի որ գեղացին կը ծեծեն, եւ կինն ու աղջիկն ալ կ'անպատուեն:

Այս տարի քանի մը գաւառներ երկրագործներուն եզ. ներէն ալ տուրք առին, իւրաքանչիւրին համար երկու շափ ցորեն. անոնք որ ցորեն չունէին ստիպուեցան գնել եւ տալ:

Ապօրէն տուրք մըն ալ կայ, եօլէյիկ կոչուած, որ հունձքին 1/6ին, երբեմն ալ աւելին է. եթէ երկրագործը մերժելու ըլլայ այս կամայական տուրքը, ամէն տեսակ նեղութեանց կ'ենթարկուի:

Գանգատները շատ աւելի ծանր են այն գաւառներէն որ կը բնակին Պէյեր, Աղաներ կամ Քիւրտեր որոնք իշ. խանութեան վրայ են, կամ տեղական կառավարութեան թով ազդեցիկ:

4. ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՏՈՒԿՆԵՐԸ

Կառավարութիւնը նոր օրէնք մը հրատարակեց որով ամէն նահանգի գլխաւոր քաղաքներուն մէջ խնայողու. թեան սնտուկ մը պիտի հաստատուի աղքատ երկրագործ. ներուն համար: Այս սնտուկներուն եկամուտ յատկաց. ուած է նոր տուրք մը որ պիտի աճուի այդ միկնոյն աղ. քատներէն իւրաքանչիւր հունձքի առնն, եւ քիչ մը ցօ. րեն պիտի ըլլայ ամէկ խօշոր արջառ գլուխ: Այս սնտու. կը սահմանուած է չքաւոր երկրագործին պէտք ունեցած օգնութիւնը հայթայթելու, պայմանաւ որ նոր հունձքին իր փոխառութիւնը հատուցանէ: Սակայն նահանգէ մը կը հաղորդեն թէ երկու տարի է, յորմէհետէ այդ տուրքը հաս.

տատուած է, բնաւ հայ երկրագործ մը անկէ օգտուած չէ. չենք զիտեր իսկ թէ այս պատուակաւ առնուած տուր. քերուն արդիւնքները ինչ եղած են, ո՛ր գացած են:

Այս սնտոքիութիւնը որուն նպատակը ժողովրդին սգ. նութիւն հասցնել էր, պատճառ եղած է բազմաթիւ բռու. նութեանց: Այսպէս, տեղ մը քառասուն հօդի որ այս տուրքը ժամանակին չէին կրցած վճարել, ամէնքն ալ բանտարկուեր են:

5. ՎԱՇԻՍ

Վարկը որ ամէն տեղ այնքան կարեւոր է, երկրագոր. ծին համար անհրաժեշտ է իբր էական պայման իր գօ. յութեանը: Առկէ առաջ կուգայ փոխառութեան պէտքը նոյն իսկ տարօրինակ պայմաններով: Օրէնքը կարող չէ վաշխառութիւնը արգիլել, վասն զի փոխառուն ազատ է իր ստակը քովը պահել: Նահանգներու բնակիչները ընդ. հանուր կերպով այս մասին շատ ծանր գանգատներ կ'ը. նեն: Քննիչ Յանձնաժողովը այս խնդրին վրայ չէ ուզած խօսիլ, վասն զի այսպիսի գործի մը մէջ կառավարական միջամտութիւնը ո՛ր եւ է օգուտ չունի. բայց ահա մանրա. գնին խուզարկութիւններով Յանձնաժողովը կը մտնէ թէ երկրագործ ժողովուրդը վաշխով փոխառութիւն ընելու կը պարտաւորի պարզապէս տուրքերու հաւաքման մէջ գործ. ուած գեղձութիւններուն պատճառաւ:

Վաշխը մեր գաւառներուն համար ժանտամահ է. իր ետեւէն կը քաշէ կը բերէ ժողովրդին կա՛մ ունեցածին վը. րուումը, կա՛մ անոր գաղթումը, ու այս աղէտներն են որ կը կոտորեն մեր երկրին ժողովուրդը և զայն կը թշուա. րացնեն:



Յանձնաժողովը Հայաստանի եւ Հայքանակ գաւառ. ներու տնտեսական թշուառութեան պատճառները այս. պէս ամփոփ պատկերով մը պարզելէ յետոյ, երկրորդ զըլ խու մը մէջ ալ կը ներկայացնէ կառավարական պաշ. տօնութեան գեղձութիւնը: Այդ գլուխն ալ կը համա. ոտեմ:

Յանձնաժողովը կը յայտարարէ թէ ինչ ինչ գաւառ. ներու մէջ, մանաւանդ այն գաւառները որոնք մայրաքա. ղաքէն հեռու են Միաքեսարըֆ, Քայմաքաւ, Միառիք ամէնքն ալ մեծ մասամբ շատ գանգատներու տեղի կու, տան, նմանապէս Հաքիւնները (գատաւոր), Միաքիւնները, գապթիկները:

Այդ գաւառներուն մէջ ոչ-միւսիւլմանները շարունակ միւսիւլմաններուն ու նաև մինչեւ իսկ միւսիւլմաններու տղոց կողմէն թշնամանք ու վնասներ կը կրեն: Ամէն օր բարոյական շատ նեղութիւններ կը կրեն, ու նաև յաճախ նիւթական կորուստներ ալ: Նորանոր ստորնացումներու ենթարկուելու վախէն շափահաւանները իրենց գործին չեն պարապիր, եւ տղաքը դպրոց չեն երթար: Բացօթեայ տեղ. ուանք ո՛ր եւ է զքօսանք ընել ներքի չէ այս խեղճերուն, որոնք այդ բոլոր վայրագութեանց գէ՛մ ուրիշ ոչինչ կ'ընեն բայց եթէ գանգատիլ. եւ այդ գանգատներն ալ արձապանց

չեն գտներ: Մինչեւ անգամ անոնց թող չի տրուիր մե-
ռններն թաղել:

Տարակոյս չի կայ թէ բոլոր այս տառապանքները կի-
տովին պիտի նուազէին, ու թերեւս ամբողջովին ալ պիտի
ջնջուէին, եթէ Հարստահարեալներուն ձայնը մտիկ ընող
գտնուէր: Բայց այս դժբաղդները պարտաւորուած են լռել,
վասն զի պաշտօնեաներուն կողմնակցական ոգին քաջա-
ծանօթ ըլլալով, բողոքի ձայները ուրիշ արդիւնք չէին
կրնար ունենալ բայց եթէ բողոքողները նորանոր աղէտ-
ներու մատնել:

Ժողովուրդներուն զլխաւոր գանգաւանները հետեւ-
եալներն նն.

1. Չրիաբար զիրենք կառավարական շինութեանց կը
գործածեն. անիրաւ տարապարհակ աշխատութիւն. ի-
րենցմէ ստակ կը խլեն զօրքերու եւ Չէրքէզներու փոխա-
զրութեան ծախքի համար. թէ անհատական եւ թէ ազ-
գային շէնքերը կառավարութիւնը կամ իր պաշտօնեաները
յաճախ կը զրաւեն:

Էրզրում եւ Կարս ամրութիւններու շինութեան հա-
մար Հարիւրներով գործաւոր բանեցուցած են անոնց ա-
ւուրչէք խոստանալով, բայց ոչ մէկուն փարա մը վը.
ճարուած է:

Չան սզան տեղուանք տուրքերը աւելցուցեր են այն
պատրուակաւ թէ կառավարութեան ձեռնարկած շինու-
թիւններու ծախքը անոնցմէ պիտի հայթայթուի: Այդ
միևնոյն տեղերու մէջ պաշտօնեաները պարտաւորեց են
բնակիչները թնգանութները իրենք քաշել տանիլ, փոխա-
նակ գանոնք ձիբրով փոխադրելու:

2. Կառավարութիւնը նաև զեղծութիւններ կը գործէ ճամ-
բաներու շինութեանց համար ալ. օրէնքը կը տրամադրէ
որ իւրաքանչիւր մարդ չորս օր չրիաբար պիտի աշ-
խատի, կամ չորս աւուրչէք պիտի վճարէ. եւ սակայն շատ
անգամ զեղացին 10էն 20 օր կ'աշխատցնեն. ստորին
պաշտօնեաները իրաց այս վիճակէն կ'օգտուին զեղացի-
ներէն ստակ կորզելու, ապա թէ ոչ այդ խեղճները պիտի
զրկուին հետո: տեղուանք աշխատելու, կամ աւելի շատ
օր բանելու:

Շատ անգամ կը պատահի որ մինչ զեղացիները տա-
րապարհակ աշխատութեանց տարուած են, Չապրիկներն
ալ տունները եւ եկեղեցիները կը մտնեն եւ գանոնք կը
թալլեն: Աւելորդ է երկարօրէն բացատրել թէ ինչքան
շատ են երկրագործին վնասները երբ իր աշխատութիւն-
ներէն կը խլուի ճիշդ այն պահուն ուր իր զաշտերը պէտք
ունին իր բազուկներուն:

3. Չապրիկները, որոնք տուրքերու հաւաքումը կ'ը-
նեն, կը չարչարեն զեղացիները սրպէս զի անոնցմէ իրենց
հաշուին ստակ կորզեն:

4. Վիշաշէր թէ շէր ի յի օրէնքին դործադրութեան մէջ ա-
մէն տեսակ զեղծում կը գործադրուի: Միշքիտարքները,
Հաքիւտները, Միշքիտները, Թահրիտարք միշտիտները ու
կրօնական պետերը որոնք տեղական վարչական ժողովը

(Խոտարէ մէշիտի) կը կազմեն, ամէն տեսակ պիւրութիւն
կը վայելեն այս մասին:

Ինչ ազդեցիկ մարդիկը, ճիշդ անոնք որ ժողովուրդը
կը հարստահարեն, շատ անգամ անոնք կը յաջողին ինք-
զինքնին ընտրել տալ. ինչ ինչ քաղաքներու մէջ ընտ-
րուած են զատապարտեալներ կամ զատարաններու առջեւ
ամբաստանեալներ:

Յոյց կուտան նաև անիրաւութիւն մըն ալ. ինչ ինչ
քաղաքներու մէջ այդ ժողովներէն Հայ անդամները բոլո-
րովին զուրս նետուած են:

5. Այս ժողովներուն անդամները շատ անգամ կը քա-
ջալերեն այն բաւոր մոլեռանդները որոնք կը ջանան կինե-
րը ու տղաքները իսլամացնել:

6. Նահանգներու պաշտօնեաները ընդհանրապէս տե-
ղացի երեւելիներուն ազդեցութեան ներքեւ կը գտնուին.
մեծ մասամբ անոնցմէ կախում ունի իրենց պաշտօնան-
կութիւնը կամ յառաջացումը. այն պաշտօնեաները որոնք
չեն ուզեր երեւելիներուն կամքը կատարել յաճախ իրենց
պաշտօնէն կը զրկուին:

7. Նմանապէս գանգաւաններ կան քերթքներու մա-
սին ալ:

Երբոր մէկը կը կը մեռնի, Ղատին շուտով հանգուց-
եալին տունը կերթայ եւ հոն ինչ որ գտնէ իր տետրակը
կ'արձանագրէ, առանց զուրս ձգելու ինչ որ մեռնողին
չպատկանիր, և այս արձանագրութեանցը վրայէն կ'առ-
նէ հանգուցեալին թողած ինչքէն իր բաժինը:

Եթէ հանգուցեալը բան մը ուրիշին ձգած է, նոյնիսկ
մեծքեմէի միջոցաւ վաւերացեալ կտակով, Ղատիները
չեն ուզեր անոր վաւերականութիւնը ճանչնալ, եւ կտա-
կին վերանորոգումը կը պահանջեն սրպէս զի փոփոխումի
երկրորդ տուրք մը առնեն:

Թերթքէն կը գործադրուի ոչ միայն անոնց համար
որ անչափահաս տղաք ունին, այլ նաև այն պարագային
ալ երբ ծառանգորդներէն մէկը երկրէն զուրս կը գտնուի:
Եւ որովհետեւ զրեթէ ամէն ընտանիք մէկ երկու բա-
ցակայ անգամ մը ունին, քերթքէն բռնի կերպով պար-
տաւորիչ կ'ընեն եւ կը գործադրեն ամէն մեռնողի
համար:

* * *

Տեղեկագրին երրորդ մասը գատարաններու առջեւ քը-
րիստոնէին վկայութեան շընչսունուելուն խնդիրը կը քննէ:
Յանձնաժողովը կը հաւատակ թէ իսլամներուն եւ քրիս-
տոնեաներուն միջեւ անվիճելի խտրութիւն հաստատող
օրէնք մըն է գատարաններու առջեւ քրիստոնեաներու
վկայութեան մերժումին օրէնքը. այդ օրէնքն է որ այս
ժողովուրդներուն մէջ առեւելութիւն կը սերմանէ և Միւ-
սիւլմանները կը քաջալերէ ամէն տեսակ անիրաւութիւն
ընելու:

Գեղի մը մէջ, շուկան կամ ո՛ր եւ է տեղ մը թիւրքին
մէկը քրիստոնեայ մը կը ծեծէ, կը նախատէ, և այլն.
գատարան կ'երթան. ո՛վ է որ քրիստոնէին ի նպաստ վը:

կայութիւն պիտի տայ. անշուշտ այն իսլաւները պիտի չ'ըլլան որոնք տեսած են քրիստոնէին կերած ձեռք կամ կրած նախատինքը: Եւ որովհետև գատարանին առջև ոչ-իսլաւներուն վկայութիւնը չ'ընդունուիր, գատը ինքնին կ'ոչնչանայ: Քրիստոնեաները չեն համարձակիր իրենց կրած թշնամանքներուն, տառապանքներուն համար պատարանի դիմել վասն զի կանխաւ ասպակով են որ տուգանքի կամ բանտի պիտի ենթարկուին: Այս օրէնքին ուրիշ մէկ հետեւանքն այն է որ միւսիւլման մը կարող է զբարտեղ քրիստոնեայ մը եւ զայն գատապարտել աւլ մահմետական սուտ վկաներու օգնութեամբը: Մօլեանց ժողովրդի մը գործած անիրաւութիւնները ահա այսպէս քաջալերուելով տեղի կուտան ամենամանր զժբաղդութեանց որոնց զոհ կ'երթան քրիստոնեաները: Իսլամը կարող է քրիստոնեան սպաննել, առեանգել անոնց կիներ, բեւ աղջիկները, եւ յանցաւորը միշտ ապահով ըլլալով թէ անպատիժ պիտի մնայ ամենայն ազատութեամբ իր շարագործութիւնները առաջ կը տանի:

Այս անիրաւ օրէնքին միջոցաւ է որ սեփականութեան իրաւունքը կը բռնաբարուի. իսլամը միշտ իր գատը կը շահի այս տեսակ խնդիրներու մէջ, իր կրօնակիցներուն տուած սուտ վկայութեամբը: Այս օրէնքը նեցուկ կ'ըլլայ Քիւրտերուն եւ ուրիշ իսլամ հարստահարիչներու եւ զանոնց կը քաջալերէ: Մէկ խօսքով՝ քրիստոնեաներու վրէպայութեան չ'ընդունուիլը ահեղ պատուհաս մըն է ժողովրդին համար:

Չորրորդ գլխի մը մէջ «Մասնաւոր Հարստահարութիւններ» վերնագրին ներքեւ ամփոփուած է ամէն տեսակ հարստահարութեանց, զեղծութեանց ցուցակագրութիւն մը:

Քիւրտերը եւ ուրիշ հարստահարիչ իսլաւները իրենց վայրագութիւնները կը գործեն ամենէն աւելի Էրզրումի եւ Տիարպէքիի կուսակալութեանց մէջ, մասնաւորապէս Վան, Քզի, Գուզուճան, Դերճան, Բաղէ, Մուշ, Չարսանճաղ, Տիարպէքի, Սղերդ:

Յանձնաժողովը բոլոր շարագործներուն անունները գիտէ, եւ կ'ըսէ թէ անոնց մասին կառավարութեան տեղեկագիրներ արուած են: Այնպիսի ահեղ տեսարաններու նկարագիրներ կան որ մարդուս մազերը կը տակեցնեն — նոյն իսկ Յանձնաժողովին բացատրութեամբը: Եւ սակայն տանջուող, հարստահարուող զժբաղդներուն եթէ պաշտօնապէս տեղեկութիւն հարցուի, պարտաւորուած են Պատրիարքարանի հաղորդած իրենց տեղեկութիւնները սրանալ, վասն զի իրենց բռնապետներուն անողաքի վրէժները պիտի զրգան:

Խարբերդ, Երզնկան, Սկն, Սղերդ, Թագատ, Բարգեւանդ կը պանդառնան թէ պէյերուն, թէ Չլրքէզներուն թէ Քիւրտերուն զէմ, եւ թէ իսլամական մոլեռանդութիւնէն:

Յանձնաժողովը կը զգուշանայ հարստարիչներուն անունները հրապարակելէ, վասն զի հարստահարեալները

իրենք ալ չեն ուզեր այս յայտնութիւնը: Անցեալին փորձառութիւնը այս խեղճ մարդիկը չափազանց վախկոտ ըրած է: Փորձառութեամբ տեսած են որ իրենց գանդատները ոչ միայն իրենց վիճակին մէջ ո' եւ է փոփոխութիւն չէ մտցուցած զէպի լան այլ եւ զիրենց տանջողներուն զարոյթը զրգած է, եւ կը վախնան որ ասկէ վերջը դեռ աւելի կրնան շարշարուիլ: Դստն ճշմարտութիւն մըն է որ նորանոր փորձերը անգամ մը ետ հաստատեցին Հայաստանի ժողովրդին փորձառութեան իրականութիւնը:

«Եւ սակայն այս կացութեան հանդէպ Ազգային Թագապետ խորհուրդները եւ գաւառական ժողովները ինչ կ'ընեն Հայաստան,» պիտի հարցուի անշուշտ, կ'ըսէ Տեղեկագիրը: Ու կը պատասխանէ: Ժողովներու, խորհուրդներու ստուերն իսկ չի կայ: Նոյն իսկ Առաջնորդները անգամ չեն կարող միջամտել թրքական իշխանութեանց թով նպաստ իրենց հօտին: Ի հարկին անոնց կ'առարկուի թէ «Դուք հոգիներու պաշտօն ունիք. ինչ անունով կը համարձակիք կառավարութեան Թագրիները զրել իր ժողով, ձեր տեղը եկեղեցին է. ուրիշ պաշտօն չունիք բայց եթէ կրօնք քարոզել, կառավարութեան գործերուն մի' խառնուիք: Գանդատ մը ունեցողները թող մեզի դիմեն:

Այս տեսակ պատասխանները այնպէս տպաւորութիւն ըրած են առաջնորդներուն վրայ որ այս վերջիններս շատ անգամ ուղած են հրաժարականսին տալ: Անօրուտ կը համարին պաշտօնավարել նահանգի մը մէջ երբ չեն կրնար իրենց ժողովրդին արդար պահանջներուն թարգմանը հանդիսանալ, եւ օրինապէս պաշտպանել անոր ստանալիս իրաւունքները:

Առաջնորդներուն ազգեցութեան չտարբերի Հայոց տեղական ժողովներուն ազգեցութիւնն ալ: Վիլայէթներու կառավարիչները, որոնց շատը աշէտ մարդիկ են, ո' եւ է կարեւորութիւն չեն ընծայեր այդ Ազգային խորհուրդներուն, որոնք սակայն հաստատուած են նոյն իսկ կառավարութեան վաւերացուցած մեր ազգային կանոնադրութեամբը: Առաջնորդ մը Յանձնաժողովին կը զրէ որ «Եթէ երբեք երբեք իր ժողովրդին նպաստաւոր բան մը ձեռք կը բերէ, միշտ վարպետութեան եւ անգաղբում աղաչանքներու շնորհիւ է. երբեք օրէնքի զօրութեամբ:»

Կառավարութիւնը Առաջնորդներուն ձեռքէն առաջին ֆերմանները որոնցմով թանկագին իրաւունքներ արբուած էր անոնց: Առաջնորդները եւ Ազգային խորհուրդները ժողովրդին արդար պատին պաշտպանութեանը համար կը Պոլսոյ Պատրիարքարանը դիմելէ կատ ուրիշ ճարչունին, ուստի եւ իրենց պանդառնները կը տեղացնեն հոն: Պատրիարքարանն ալ ուրիշ ոչինչ կրնայ ընել բայց իթէ Բ. Դրան քաղրիք զրել:

Բայց այդ քաղրիքներն ալ ո' եւ է ազգեցութիւն չունին, վասն զի Դուք շատ ճարպիկ միջոց մը գտած է անոնց պարունակութեան հերքումին համար. խաբիւսմի գրութիւնը հաստատած է: Պապը—Ալին Պատրիարքարանէն ստացած ո' եւ է մէկ քաղրիքին պարունակութիւնը կը

հաղորդէ կուսակալներուն որպէս զի անոնց մասին քըն-
նութիւն կատարուի, վասն զի ինք կառավարութիւնը տե-
ղեկութիւն չունի թաքրիբի միջոցաւ իրեն հաղորդուած
գանգատներուն վրայ: Այս գործողութիւնը կը կոչուի «խ-
թիլամ»: Կուսակալը Պոլսէն ստացած հրահանգները կը
հաղորդէ այն միտքաւարներին կամ գաղմագամին որուն
իշխանութեան շրջանակին մէջ պատահած են Պատրի-
արքարանի բարքիւրին տեղի տուող դէպքերը: Բնակա-
նաբար այդ պաշտօնեաները եղելութիւնը կ'որանան,
կամ բողոքովին տարբեր գոյնով կը ներկայացնեն զայն:
Իսկ եթէ իրողութիւնը շատ ծանր է եւ պարտկուած ան-
հնարին, կը ջանան իր կարևորութիւնէ զուրկ բան մը
ցոյց տալ զայն: Ու անոնք որ այդ գանգատները բրած
են կը պարտաւորուին հերքման գրին ներքեւ ստորագրել,
կառավարիչներուն տարածած ահն ու սարսափը այնքան
ահեղ է որ Պատրիարքարանին գանգատողները եթէ չու-
զեն ստորագրել իրենց առաջարկուած հերքման գրիւրը, կամ
կը սպաննուին, կամ իրենց ստացուածքէն կ'ըլլան: Հան-
րային պաշտօնեաները առանց խղճահարութեան սուտ ըս-
տորագրութիւններ ալ կը դնեն հերքման գրիւրուն ներքեւ.
եւ կամ անոնց պարունակութիւնը եղածէն բողոքովին
տարբեր բան մը ցոյց տալով կը խաբեն խեղճ ժողովուրդը
եւ կարելի եղածին չափ շատ ստորագրութիւն կը հա-
ւաքեն:

* * *

Յանձնաժողովը վերջին քսան տարուան մէջ, 1850-
1870, Ազգային վարչութեանց բոլոր ատենագրութիւնն-
ները կարգաւոր, ինչպէս նաև Դրան տրուած բարքիւրները,
կը յայտարարէ թէ այս ընթացումը իր աչքին առջև քո-
ղամերկ պարզած է Հայաստան գործուած զեղծումնե-
րուն եւ հարստահարութեանց անհունութիւնը:

Պատրիարքարանին բարքիւրները երկու մասի կը
բաժնուին: Առաջինը՝ կը վերաբերի իւրաքանչիւր գա-
ւառէ եկած տեղեկագիրներուն, մասնաւոր դէպքերու,
երկրորդը՝ ընդհանուր կացութեան վերաբերող խնդիրնե-
րը կը շօշափէ: Քսան տարուան մէջ 537 բարքիւր գըր-
ուած է գաւառներէ եկած տեղեկագիրներու պարունակու-
թեանց համեմատ: Ինչ որ կը նշանակէ թէ Պատրիարքա-
րանը երկու շաբաթը անգամ մը Դրան բարքիւր մը գրած
է մասնաւոր դէպքի մը համար: Իսկ ընդհանուր զեղ-
ծումներու դէմ տրուած բողոքագիրները այնքան շատ են
որ այս Յանձնաժողովը անոնց թիւը չէ նշանակած: Ինչ-
պէս կը տեսնուի, Պատրիարքարանը դատարկապորտու-
թեան հանգստարան մը չէ եղած: Միշտ եւ հանապաղ
Հայաստանի ձայնին արձագանգ տուած է:

Մասնաւոր դէպքերու համար գրուած 537 բար-
քիւրները հետեւալ կերպով կը բաժնուին վիլայէթներու
վրայ:

Էրզրումի վիլայէթը, որ ան ատեն վանը, Բաղէշն ալ
իր մէջ կը պարունակէր, 136 գանգատագրի նիւթ մա-

տակարարած է, հետեւալ բաժանումներով. Մուշ՝ 39,
Քղի՝ 16, Երզնկեան՝ 13, Բաղէշ՝ 12, Դերձան՝ 5, Պա-
յաղիտ՝ 5, Վան 20, Կարս՝ 6, Բարբրդ՝ 8, Էրզրում՝
10, Աղթամար՝ 2:

Տիարպէքիբի վիլայէթին համար 158 բարքիւր, ս-
րոնցմէ ունին՝ Չնքուշ՝ 6, Չմշկածէզ՝ 7, Խարբերդ՝ 32,
Արարկիբ՝ 11, Ակն՝ 5, Տիարպէքիբ՝ 30, Պէհեզնի՝ 4,
Չարսանճագ՝ 10, Բալու՝ 11, Քէմախ՝ 8, Մալաթիա՝
10, Սղերդ՝ 19, Արզն՝ 5:

Սըվազի վիլայէթէն 83, որոնց մէջ ունին, Եւփոկիա՝
9, Քարա Հիսար՝ 5, Ամասիա եւ Մարգուան՝ 20, Տիւ-
րիկ՝ 12, Սվազ՝ 35, Կիւրին՝ 2:

Հալէպի վիլայէթէն 44: Ստորաբաժանում. Մարաշ՝
18, Անտիոք՝ 2, Ուրֆա՝ 6, Հալէպ՝ 4, Չկլթուն՝ 8,
Սիս՝ 2, Այնթապ՝ 3, Պելէնի՝ 1:

Ատանայի վիլայէթէն 19, որոնց մէջ՝ Ատանա՝ 14,
Տարսուտ՝ 3, Հաճըն՝ 2:

Տրապիզոնի վիլայէթէն 14, որոնց մէջ Տրապիզոն՝
8, Ճանիկ՝ 5, Արզուին՝ 1:

Սուրիոյ վիլայէթէն 13: Ատոնցմէ 2 Դամասկոսի, 11
Երուսաղէմի համար են:

Այսին վիլայէթը էն բարեբաղդն է. քսան տար-
ուան մէջ միայն իզմիրի համար մէկ գանգատագիր գըր-
ուած է Դուռը:

Էնկիւրիի վիլայէթին համար 21 բարքիւր որոնցմէ 2
Եօզղատի, 13 Կեսարիոյ, 6 Էնկիւրիի համար:

Պրուսայի վիլայէթին համար 38 բարքիւր: 12 Պը-
րուսայի, 8 Քէօթահեայի, 9 իզմիրի, 9 Պալքէսե-
րի համար: Քասթէմունիի վիլայէթին համար ալ 1
բարքիւր:

Բումէլին ալ մէջն է: Վանայի համար 5 բարքիւր.
Ռօտոտո՝ 2, Էտիրնէ՝ 1, Քէօտտէնճէ 1:

Այս բոլոր բարքիւրներուն նիւթերն են այն հարստա-
հարութիւնները որոնք չորս զուլի մէջ ամփոփուեցան:
Բայց Պատրիարքարանը երբեք մասնաւոր բարքիւր չէ
գրած քրիստոնեաներու վկայութեան շնորհունուիլու խնդ-
րին համար, վասն զի իր բոլոր բարքիւրներուն մէջ միշտ
այդ խնդրին կը վերադառնայ:

Իսկ այն բարքիւրները որոնք ընդհանուր հանգամանք
ունին, կը շօշափեն բազմատեսակ խնդիրներ, եւ յա-
ճախ երկու անգամ, երեք անգամ կրկնուած են:

Հարստահարութեանց տեղեկագրին առաջին մասը
հոս կը վերջանայ: Երկրորդ մասին մէջ կը գտնենք Հա-
յաստանի վիճակին բարւոյցման ծրագիր մը, որ յաջորդ
յօդուածին նիւթ պիտի ըլլայ:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՀԱՅՎԱՍՏԱՆԻ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Երրոպա հասած լուրերը Հայաստանի մէջ թրքական վարչութիւնը օրէ օր աւելի վայրագած կը նկարագրեն:

Բիւթերի գործակալութիւնը Կ. Պոլսէն մայիս 23 թուակ սնով կը հաղորդէ հետեւեալը:

«Ըստ վերջին տեղեկութեանց Հայաստանի զանազան կողմերը կառավարական խտուրթիւնները սաստկացած են, նպատակ ունենալով որչափ կարելի է մեծ թուով հայեր իսլամացնել, թէև Վանի եւ Բաղէշի վեճակին մէջ լուսացում կը տեսնուի: Ի սկզբան կը կարծուէր թէ տեղական իշխանութեանց կողմէն ի գործ դրուած ձնշումը սուրբերու գանձումին համար էր, բայց այժմ կը տեսնուի թէ կառավարութեան ջանքերը կը ձգտին Հայոց իսլամացման: Հայերը կը սկսին ըմբռնել թէ յարձակուած իրենց կրօնքին դէմ է, եւ ազատամի ուրիշ ճար չունին բայց եթէ կա՛մ իսլամանալ, կա՛մ Ռուսիա փախչիլ: Շատեր կը հակին փախուտի, բայց իսլամացումներն ալ կը բազմանան: Հաւատափոխութեան կը դիմեն մասնաւորապէս Սղերզ, Խիզան, Հեքքեարի, Շիրվան, Գուաշ, Շատախ, Երնկեան, Մոկս, Կարճկան, Նորտուզ որոնք ամէնքն ալ Վանայ Լճին հարաւային կողմն են: Ուրիշ ծանր պարագայ մըն ալ գործերու հալալի յանձնումն է: Տասնապետներ, յիսնապետներ կը տարածուին զեղերը և այդ հալալիներուն դիւրաւ գանձումին համար ինչ միջոց որ ուզեն կը կարգադրեն: Շատ խառնաշփոթութիւն կը տիրէ բազմաթիւ զիւղերու մէջ: Հայ զեղացիները իրենց անձին փրկութեանը համար ինչ ճամբայ որ զանեն անկէ կը փախչին: Բազմաթիւ զեղացիներ ուստական սահմանազուտը անցեր են. կան ալ որ ապաստաններ են Էրզրում եւ ուրիշ մեծ քաղաքներ ուր կացութիւնը քիչ շատ լուսացած է:»

Երրոպական ուրիշ թերթեր ալ աւելի մանրամասնութիւններ կը հաղորդեն հաւատափոխութեան այս դէպքերուն վրայ: Կը գրեն թէ 1896էն յետոյ տեղի ունեցած պատահարներուն պատճառաւ Աղբակի, Արճէշի, Կարճկանի, Գուաշի, եւայլն զեղերէն քանինները պարտաւոր ունեցան առ երեստ իսլամանալ որպէս զի կարենան ապրիլ: Կը յուսային թէ Հայաստանի աղիտաւոր կացութիւնը շուտով վախճան գտնելով իրենք ալ պիտի կարենային դարձեալ քրիստոնէութեան դառնալ: Բայց զժբաղդ բար կացութիւնը փոխանակ բարուքելու օրէ օր աւելի ծանրացաւ, եւ այդ զեղերը շարունակեցին իսլամ ձեւանալ: Պոլիս կեդրոնական իշխանութիւնը զիտէր թէ որքան աւտեն որ հաւատարացութիւնը պաշտօնապէս վաւերացուած չէ հայերը մէկ օրէն միւսը կարող են ինքզինքնին քրիստոնեայ հռչակել, հետեւաբար Երլազէն խիստ հրամաններ կը դրկուին Վան որպէս զի իսլամացման պաշտօնական գործողութիւնները կատարուին: Այս ձմեռ Մահմուտ փաշա որ Պաշ-Գալէի գայմագամն է, երբ զին-

տրական սուրբը ամենայն խտուրթեամբ հաւաքելու կը հետամտի, միևնոյն ատեն կը կանչէ հաւատափոխ համարուած հայոց ներկայացուցիչներն ալ ու անոնց կը հրամայէ որ անմիջապէս Մեճիտը Խտարէին մէջ պաշտօնապէս քաջրիտ տան իրենց իսլամացմանը, և ըստ այնմ ալ արձանագրութիւն կառավարական սուլտաններուն մէջ. ապա թէ ոչ հայ պիտի ճանչցուին եւ զինուորական սուրբերնին յետամնացուլը ամբողջապէս պիտի վճարեն: Խեղճ ժողովուրդը որ ստակ մը չունի, յուսահատութեան մատնուած, եւ տեսնելով թէ Պոլսոյ Պատրիարքարանն ալ ո՛ր և է կերպով իրենց չօգնէր այս ծանր կացութեան մէջ, կը պարտաւորութիւն գաւառին կեդրոնը դիմել եւ իսլամութիւնը ընդունած ըլլալու յայտարարութիւնը ընել:

Վանեցիներու ստացած մասնաւոր նամակներէ հետեւալ տեղեկութիւնները կը հաղորդուին մեզի:

«Մեր գիւղերու միայն անունով իսլամ ճանչցուած հայերը սկսան խուժա խուժա իրենց գաւառներուն կեդրոնները երթալ եւ պաշտօնապէս թիւրք արձանագրուիլ: Մինչեւ հիմա հետեւեալ զիւղերէն թրքացան.

Իէլակոմ	Անձ	10
Պապլասան		16
Նորակետ		48
Չրկեան		30
Կարսղուլի		40
Հասպուտան		10
Երնկեան		21
Փարո		16
Աշկերա		123
Գուաշի թիմուր զեղ		160
Պաշկալէ եւ շրջականերէն		100

574

Նորակետն ալ 20 տուն Պարսկաստան դաղթեցին:

Ամբողջ Վասպուրականի ժողովուրդը յետին ծայր թշուառութեան մէջ է. սուրբերը վճարելու համար իրենց անասունները ծախեցին, կօտ մը ցորեն իսկ չունին: Ամէն կողմէ զեղացիները իրենց ճիճերով Վան թափեր են և Առաջնորդարանին շուրջը առած են:»

Հիւսնի-Մանսուրիէն ալ հետեւալը կը հաղորդուի անլիական թերթերուն. «Հայոց դէմ խտուրթիւնը օրէ օր աւելի կը սաստկանայ: Գրեթէ չորս ամսուան մէջ խեղճ ժողովրդէն աւելի քան երեսուն հազար զուրուշ սուրբ անուեցաւ. և սակայն այդ ժողովուրդը վերջի տարիներու արկածներէն ծանրապէս աղքատացած է, ու տակաւին կառավարութիւնը նորանոր պահանջներ կ'ընէ: Անոնք որ նիւթապէս անկարող են իրենցմէ ուզուած դրամը վճարելու, կը ծախեն մինչեւ իսկ իրենց անկողինը, տուններնին մնացած քիչ մը պաշարը, և գունները ինսլով կը սկսին մուրալ: Շատ հայերէ տասը, քսան տարուան զինուորական սուրբ կը պահանջեն, ըսելով թէ արձանագրութեանց սուլտաններուն մէջ անուննին արձանագրել չեն սուած: Այս թշուառները ցոյց կուտան ի-

րենց համարին որ կ'ապացուցանէ թէ իրենք արձանագրուած են, բայց սրճու խօսք հասկցնել. եթէ քիչ մը աւելի պնդեն, ահա մեծակ զուժար մը մէկէն վճարել կը պահանջեն:

Մայիս 26ին Տէյրի Մէյըը կ. Պոլսէն հեռագիր մը հրատարակեց, ծանուցանող թէ խիզանի մէջ կարելի չէ եղած Զատիկը տօնել, զինուորներուն սպանալից դիրքին պատճառաւ: Հիւանդի հաղորդութիւն տանող քահանայ մը փողոցը ցորեկ ատեն իսլամներէն ծեծուեց է:

Վերայիշնալ թերթին նոյն թիւը կը հաղորդէ նաեւ թէ, Արաբկերի գայմազամը նշանաւոր կը հանդիսանայ իր անսահման վայրագութեամբը: Այդ կառավարական պաշտօնեան, կըսէ անգլիական թերթը, այցելելով Արաբկերի Հայոց տունները կ'անպատուէ հաւնած աղջիկները:

Պուլկարիայէն արժանահաւատ արաբկերցի մը մեզի կը հաղորդէ կարգ մը տեղեկութիւններ որոնք Տէյրի Մէյըը լուրերը կը հաստատեն աւելի ընդարձակ մանրամասնութիւններով: Ատոնցմէ կը քաղենք հետեւեալները:

Արաբկերի գայմազամը համբաւուոր սրիկայ մըն է. և կառավարական պիտաւոր պաշտօնեաները իրեն միացուցած է որպէս զի ընկերակցութեամբ հայերը անպատուեն եւ հտրստահարեն: Գայմազամը իր տրամադրութեան ներքեւ ունի ոստիկան մը և անբարոյականացեալ կին մը որոնք իրեն կը տեղեկագրեն զեղբցիկ հարսերու և աղջիկներու անունները: Եւ ահա գայմազամը պաշտօնապէս մարդ կը զրկէ այդ տունները եւ ուզած հարսը կամ աղջիկը պաշտօնատունը կը կանչէ: Ինքնայոժար չզացողներուն ամուսինները, եղբայրները, զաւակները կը ձերբակալուին իբր քաղաքական յանցաւոր, կը բանտարկուին, եւ կեանքերնին վտանգի մէջ է: Նմանապէս հրաւիրեալ աղջիկներն ու հարսերը ոստիկանական զօրութեամբ իբրև քոմիսարներ կը տարուին գայմազամին մօտ, և իրենց անպատուութենէն յետոյ տուններնին կը զրկուին: Պատմութիւնները որ կը լսուին ահեղ են: Գայմազամին այս օրինակին կը հետևին ամէն կարգի ուրիշ պաշտօնեաներ ալ, որոնց մէջ նշանաւոր կը հանդիսանան երկրագործական պանքային տնօրէն Սապրի և հեռագրատան պաշտօնեայ Շաքիր անունով սրիկաները: Հիմակ կինները իբր բանախ մէջ փակուած են իրենց տունները, մինչ իրենց կրիկ մարդիկը բանտերը լեցուեց են:

Նիւթական հարստահարութիւններն այաննկարագրելի են: Գայմազամը կեղեքումի գործին մէջ ալ իրեն մեղսակից առած է Պէլէտիյէի նախագահը: Զանազան պատրուակներով կը կողոպտեն ժողովուրդը: Այս ինչ հայը իր խանութին ուղ վերադարձաւ ուրեմն պէտք է տուգանք տայ: Այս տուգանքները քառորդ ոսկիէ մը մինչև ոսկի մը կը բարձրանան:

Արաբկեր սկսած է դատարկուիլ. ժողովուրդը իր պատիւը, կեանքը փրկելու համար հետզհետէ կը դադարէ: Այս տարագրութիւնն ալ հասոյթի նոր աղբիւր մըն է գայմազամին համար. քաղաքէն հեռացող ամէն մէկ հայ ոս-

կիէ մը մինչեւ հինգ ոսկի անցադրի ծախք պէտք է վճարէ:

* * *

Ինչպէս կը տեսնեն մեր ընթերցողները հետզհետէ այս էջերուն մէջ հրատարակուած տեղեկութիւններէն, որոնց ստուգութիւնը երբեք կասկածի ենթակայ չի կրնար ըլլալ, Հայ աշխարհին ամէն կողմը միեւնոյն աղէտները կը խոշտանդեն հայ ժողովուրդը. եւ միշտ Երլուրդէն է որ միեւնոյն հրահանգները կը զրկուին Տիարպէքեր, Վան, Արաբկեր, ամէն կողմ: Ու ապահովութեան համար սուլութեանը իր էն սրիկա պաշտօնեաները կը նշանակէ:

Արդեօք եւրօպական մամուլին ու եւրօպացիական Հայոց հասած այս ծանր տեղեկութիւններէն ոչ մէկը Պատրիարքին կամ Տատեանին ականջը չէ հասած, որ լուրսին կը պահեն:

Այս աղիտաւոր կացութեան հանդէպ սուլութեանը մտածել է որ դառն հեգնութիւն մը ըլլալու է Բարեկարգութեանց Գննիչ Յանձնաժողովի մը գոյութիւնը, ուստի եւ իրատեսով մը զայն լուծել է: Ո՞վ կը յիշէր այդ Յանձնաժողովը. անոր թաղման լուրն է որ մտքերնիս կը ձգէ թէ արդարեւ ատանկ մարմին մը գոյութիւն սենէր: Կազմուած էր 1895ին, իբր հսկող ժողովը «Բարեկարգութեանց ծրարողին»: Երկու հայ անդամ ալ կային մէջը. մէկը՝ Սալմազ Յովհաննէս Լէֆնախի, միւսը՝ Տիպեր Լէֆնախի: Թիւթի գործակալութիւնը այս առթիւ կը զրկէ. «Այսպէս ահա կ'անհրաժեշտայ և վերջին մնացորդն ալ «Բարեկարգութեանց Յանձնաժողովին», ինչպէս ունեցիկ լեզուով կը կոչուէր, և անոր հետ վերջնապէս կը թաղուի «Բարեկարգութեանց ծրարի» զօր 1895ին Անգլիոյ, Ֆրանսայի, Ռուսիոյ զեօպանաառնները այնքան բազմաշխատ տքնութեամբ պատրաստեցին: Սկիզբէն իսկ ո՞ր կարեւորութիւն չէր տրուած այդ Յանձնաժողովին, այնպէս որ գոյութեանը շարունակութիւնը կամ իր լուծումը ո՞ր է թեթեւ տարբերութիւն չունի: Այս Յանձնաժողովին կազմութիւնը որ ժամանակին ի ձայն փողոյ հռչակուեցաւ, կը նկատուէր իբր Եւրօպայի աչքին փոշի նետելու սահմանուած մարմին մը, ու միանգամայն միջոց մը պաշտօն գտնելու Մարեշալ Շաքիր փաշային, որուն Պսիլիս ներկայութիւնը փափաքելի չէր: Շաքիր փաշա այս պաշտօնառնները շրջեցաւ, եւ այս պատյար գաւառական սնտուկներուն համար մեծ ծախքի պատճառ եղաւ. բազմութիւն տեղեկագիրները հաղորդեց, ոչ մէկը անոնցմէ երբեք չի հրատարակուեցաւ: Ահա ինչ որ ըրաւ այդ Յանձնաժողովը:

ԿՐԿԻՆ ՎԵՐԱԴԱՐՁ

ՕՐՄԱՆԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԲԻՆ

Օրմանեան պատրիարքը նորէն աթոռը վերադարձաւ: Կ. Պոլսէն Րիւթէրի գործակալութեան Մայիս 24 թուականով հեռագիր մը հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ պատրիարքական տագնապին վերջացման պարզաներուն վրայ:

Կ. ՊՈԼԻՍ, Մայիս 24

« Հայոց պատրիարքը այսօր Երլտըզ Գէօզի կանչուեցաւ. իրեն հաղորդեցին իրատէ մը որ հետեւեալ երեք կէտերը կը շնորհէ.

1. Բացառիկ կերպով Հայոց համար տեղի ունեցած դժուարութեանց դադարում:

2. Թիւրքիոյ բոլոր Հայոց վրայ Պատրիարքարանին իրաւունքներուն պահպանումը, Սիսի կաթողիկոսին ընտրութիւնն ալ մէջը ըլլալով:

3. Դերազրութիւններ կրող Հայոց զինուորական յետաձայն տուրքերու շնորհում, եւ նոր տուրքերու վճարումի համար պիւրութիւններ:

« Ուրիշ իրատէ մըն ալ կը հրամայէ Պատրիարքին վերստանձնել իր եկեղեցական պաշտօնը: Պատրիարքը զուարթեց Հայոց ազգային ժողովը (այսինքն՝ կրօնական եւ Բաղաքական ժողովները) անոնց հաղորդելու համար սուլթանին հրամանները: Հայոց Պատրիարքարանին երկու ամիսէ ի վեր տագնապը վերջացած կրնայ համարուիլ:

* * *

Օրմանեան պատրիարքը իր պաշտօնավարութեան թուականէն ի վեր քանի մը անգամ հրաժարական տուած է, եւ առանց իր պահանջումներուն ո՛ր եւ է զրական գոհացում ստանալու միշտ վերադարձեր է իր աթոռը: Բայց տրդի վերադարձը բացառիկ կարևորութիւն ունի երբ նկատողութեան առնեց Հայաստանի կացութեան օրէ օր ծանրացումը, ազգային մտքին տրամադրութիւնը, Պոլսոյ մէջ յեղափոխական շարժումի վերսկսումը, եւ ուսական քաղաքականութեան Հայոց նպաստաւոր ուղղութեան մը նշանները: Չենք կրնար, կամ թէ չենք ուզեր, առ այժմ ո՛ր է բացարձակ կարծիք յայտնել այդ վերադարձին հաւանական հետեանքներուն վրայ. միայն կուզենք օրուան կացութիւնը ճշգրտապէս ներկայացնել « Բարենորոգումներու խնդիրը » բաժնին մէջ որպէս զի կարելի ըլլայ զէպքերու ընթացքին զիտակցօրէն հետեիլ:

ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐՈՒ ԽՆԴԻՐԸ

ՌՈՒՍՍԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆ

Բաղմաթիւ նշաններ կը հաւաստեն թէ Եւրոպա հայկական խնդրով վերստին զբաղելու տրամադիր կ'երևի: Տէյնի Գրօնիկոյ խմբագրականով համառօտ բայց յստակ գաղափար մը կուտայ Հայաստանի բարեկարգութեանց խնդրին համար Եւրոպայի նոր ձգտումին վրայ: « Նշանակութեան շատ արժանի իրողութիւն մըն է որ, կ'ըսէ արմատական մեծ օրաթերթը իր մայիս 26ի թուին մէջ, այն պղտիկ զիջումներու շնորհումը զոր սուլթանը Հայոց պատրիարքին միջոցաւ երէկ իր հպատակ Հայոց ըրաւ, տեղի կունենար ճիշդ այն պահուն երբ ուսական կառավարութիւնը ստիպողական պահանջումներ կ'ընէ, եւ կը ծանուցուի թէ Գերմանիոյ, Աւստրիոյ ու Անգլիոյ զինուորական կցորդները « քննական պտոյտ մը » պիտի ընեն Հայաստան: Այս վերջերս Թիւրքիայէն հասած լուրերը քիչ մը մթազին են, ու սուլթանին աւելի կամ նըւազ խոստումը կացութեան վրայ զգալապէս չ'ազդեր: Բայց այն երեք իրողութիւնները զոր կը յիշատակենք, երբ մէկտեղ բերենք, ակնբռե ցոյց կուտան թէ Հայաստանի համար Պետութեանց շահագրգռումը կը սկսի վերակենդանանալ, եւ թէ սուլթանը խոհեմութիւն կը համարի Պատրիարքարանին հետ կարգադրութեան մը յանգիլ: Եւրոպա պարտականութիւն մը ունի Թիւրքիոյ մնացող Հայերուն. եւ եթէ Պետութիւնները համաձայն են իրենց պարտքը վճարելու յարմար եղանակին վրայ, սուլթանը իր դէմը պիտի տեսնէ կացութիւն մը որ շատ տարբեր է կրեք չորս տարի առաջ եղածէն: »

Անգլիական թերթին այս տեսութիւնը թէ և վճռական բան մը չըսեր, բայց քանի մը տողով կը պատկերացնէ կացութիւն մը որ սուլթանին համար տագնապողական է:

* * *

Պոլիս ուսական զեռպանատունը սկսած է պահանջու կոտ երկնալ Հայոց խնդիրներուն համար. Պ. Չինուլիէֆ, Ռուսիոյ զեսպանը Բեղրպուրի երթալէն առաջ Օրմանեան պատրիարքին տուած այցելութեամբը, որ մէկ ու կէս ժամ տևած էր, յայտնած էր Ռուսիոյ բարեացակամ տրամադրութիւնները Հայոց համար: Հիմակ Եւրոպա հասած բոլոր տեղեկութիւնները կը համաձայնին պատրիարքին պահանջումներուն սուլթանին զիջողութիւնը վերադրել այն երկիւղին զոր Ռուսիա կ'ազդէ թիւրքին: Տէյնի Մէյն պահպանողական օրաթերթը Կ. Պոլսէն հետեւալ հետագիրը ստացած է:

Կ. ՊՈԼԻՍ Մայիս 22

« Հայաստանի կացութիւնը զոր արդէն համառօտաւ »

որ նկարագրած եմ, մեծապէս տագնապալից է եւ կըրնայ բացատրիկ կերպով ծանր հետեւանքներ ունենալ:

Կը տեսնուի թէ թրքական քաղաքականութիւնը կը ձգտի հայերը կամաց կամաց հետզհետէ ոչնչացնելու, զանոնք զաւանափոխութեամբ թիւրքերուն հետ ի մի ձուլելով:

«Նաև կ'երևի թէ Հայոց սպանացոյ վտանգը խաբանելու կարող ուրիշ պետութիւն չի կայ բայց եթէ Ռուսիան: Սակայն Ռուսիա որպէս զի կարենայ գործել, հարկ է որ հայերը իր պաշտպանութեան ներքև առնէ. այս պարագային ալ դժբաղդ ու հալածեալ ցեղը իր ազգութիւնը պիտի կորսնցնէ:

«Հայկական գործերու ուսական միջամտութիւնը հաւանօրէն հետեւանք մըն է Սեւ ծովուն հովիտը եւ ուսական սահմանազլիս երկաթուղիներու շինութեան համար Ռուսիոյ ստացած մենաշնորհին:

«Ռուսիա չի կրնար անտարբեր հանդիսատես մնալ այդ գաւառներու խոտլութեանց, որոնց առջևը առնելու համար իր ամբողջ ազդեցութիւնը ի գործ պիտի դնէ: Այժմ Ռուսիա միակ պետութիւնն է որմէն սուլթանը կը վախնայ, ու եթէ իր անձնական ապահովութիւնը վրտանգուի, պիտի տայ ինչ որ Ռուսիա ուզէ:

Կացութիւնը այս ըլլալով կարելի է մտաբեր Արևելահան քաղաքականութիւնը նոր ուղղութեան մը մէջ մըտած տեսնել:»



Ինչպէս արդէն հաղորդած ենք, Կ. Պոլսոյ ուսական ղեկավանատունը Դրան ուղարկութիւնը հրաւիրած էր Փոքր Ասիոյ Արևելեան գանազան գաւառներու մէջ Հայոց կացութեան վրայ. այս միջամտութեան մեծ կարեւորութիւն կ'ընծայուէր Պոլիս, և ահա ղեկավանատունը նոր դիմում մը եւս կ'ընէ: Մայիս 19ին բերանացի դիտողութիւններ ըրած էր միայն, իսկ երկու օր ետքը՝ մայիս 21ին, զրաւոր ծանուցագիր մը կը ներկայացնէ Դրան: Բիւթէրի գործակալութիւնը այս ծանուցագիրն առթիւ հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ անդիակական մամուլին:

Կ. ՊՈԼԻՍ Մայիս 23

Ռուսիոյ ղեկավանատունը թրքահպատակ Հայաստանի մէկ քանի գաւառներու կացութեանը վրայ մայիս 19ին Դրան բերանացի դիտողութիւններ ներկայացնելէ յետոյ, երկու օր վերջն ալ ծանուցագիր մը տուաւ: Ռուսիոյ այս միջամտութիւնը կարելի է ըսել թէ ոչ ոքին զարմանք կը պատճառէ: Վերջին ատեններս մասնաւոր նամակներէ կը տեղեկացուէր թէ Ռուսիա ոչ միայն Կովկասի այլ և Թիւրքիոյ Հայոց նկատմամբ ալ իր ուղղութիւնը փոխած է: Ռուսիա որ առաջ Հայոց հետ եթէ ոչ թշնամաբար բայց գոնէ անտարբեր կը վարուէր, հիմակ սկսած է հոգածու ըլլալ անոնց: Այստեղ տմէն մարդ գիտէր թէ ուսական ղեկավանատունը սովորականէն աւելի կը շահագրգռուէր Հայոց գործերովը. եւ երբ Պ. Չիսուլիէֆ Օրմանեան

պատրիարքին հետ տեսակցելէ յետոյ ապրիլ 15 ին մեկնեցաւ ասիէ եւ Բեդրպուրի գնաց, ամէն օք կը զգար թէ Նորին վսեմութիւնը առիթէն պիտի օգտուէր իր Կառավարութեան հետ խորհրդակցելու համար ուսական սահմանազլիս նահանգներուն կացութեան վրայ:

«Դեսպանը այս ամսուս վերջը հոս պիտի վերադառնայ, եւ անտարակոյս այն ատեն բան մը պիտի իմացուի Հայոց վիճակի մասին ուսական կառավարութեան դիտաւորութիւններէն: Առ այժմ կարևոր քայլերը ցոյց կուտան թէ Ռուսիա նոր քաղաքականութիւն մը կը սկսի այստեղ:

«Կացութեան մէջ եթէ բարւոքում տեղի չունենայ, անհաւանական չէ որ հայկական խնդիրը նորէն օրուան հարցը ըլլայ: Այս անգամ սակայն բարեփոխեալ ձևի ներքև, նկատելով որ Ռուսիա ինքն է միայն որ գործը ձեռք կ'առնէ, ինչ որ շատ բնական կ'երևի յորմէ հետեւ Անգլիա այլ եւ ո'չ Հայոց ոչ ալ Թրքաց գործերուն խառնուիլ կ'ուզէ: Բնականաբար ամէն ինչ կախում ունի այս գործին մէջ Ռուսիոյ յառաջացման աստիճանէն: Եթէ իր միջամտութիւնը պարզապէս ծանուցագիրներ տալէ անդին չ'անցնի, բան մը պիտի չըլլայ եւ Հայոց վիճակը փոխանակ բարւոքելու աւելի պիտի գէշնայ: Սակայն հոս երևոյթէն դատելով, ու միանգամայն նկատողութեան առնելով Կովկաս տիրող զինուորական գործունէութիւնը, կ'երևի թէ Ռուսերը հաստատապէս որոշած են կորովալիր առաջ տանիլ այս գործերը եւ զանոնք ի զուիս հանել: Հետեւաբար Ռուսիոյ այս վերջին պահանջումները շատ լուրջ ուշադրութեան առարկայ եղած են, եւ Դուռը յանկարծակիի բերին, վասն զի Կառավարութիւնը կը կարծէր թէ Փոքր-Ասիոյ երկաթուղիներու գործին մէջ ուսական պահանջումին զոհացում տալով, Կովկաս փախչոխ Հայոց վերադարձին եւ այս կարգի ուրիշ խնդիրներու վրայ այլ եւս խօսք պիտի չբացուի:»

Կ. Պոլսէն Տէյլի-Մէյլի կը հեռագրեն մայիս 29 թուականով:

«Ռուսական կառավարութիւնը Հայաստանի կացութիւնը չափազանց ծանր կը նկատէ, եւ կը պահանջէ որ Դուռը անմիջապէս հրահանգ դրկէ նահանգային իշխանութեանց որպէս զի զաղբեցնեն իրենց կամայական և հարստահարիչ ընթացքը:

«Եթէ Ռուսիոյ այս ազգաբարութիւնները փափաղուած արդիւնքը առաջ չբերեն, Զարին կառավարութիւնը կը սպանայ Անատոլիոյ սահմանազլիս վրայ ազգու միջոցներ գործադրել, եւ հետեւանքներուն համար Դուռը պատասխանատու կը բռնէ:

«Պոլսոյ ուսական ղեկավանատունը Բեդրպուրիէն հրահանգ ստացած է կորովալիր գործելու:

Տէյլի Թեյեկրաֆին մայիս 31 թուականով կը հեռագրուի:

«Հայաստան կացութիւնը շատ ծանր է:

«Ռուսիա Թիւրքիոյ գէմ խտտապահանջ դիրք կը բռնէ: Անատոլիոյ բարեկարգութիւնը վերահաստատելու հա-

մար իր որոշումը կ'իմացնէ, եթէ Դուռը անկարող է այս գործը ինքը կատարել: Դէպքերուն պատասխանատուութիւնը իր վրայ չ'առնել այն պարագային համար որ Դուռը ալս պահանջումը չկարենայ գործադրել:

Բիւթերի գործակալութիւնն ալ մայիս 29 թուականով Կ. Պոլսէն հետեւալ կարևոր տեղեկութիւնները կը հեռագրէ անգլիական թերթերուն.

«Ռուսական զեսպանատան գործակատարը Դրան բերանացի կրկնեց նախապէս ըրած ազդարարութիւնները, որոնք կը վերաբերին Կովկասի թիւրք հիւպատոսներէն կանոնաւորապէս վաւերացուած անցադիր ունեցող փախստական Հայոց վերադարձի խնդրին, ինչպէս նաև ուսական սահմանազրկին յօտ ինչ ինչ նահանգներու Հայոց վիճակին: Միևնոյն ատեն գործակատարը վերջին անգամ տուած զրաւոր ծանուցագրին պատասխանը ըստ փոփոխութեան ուղեց:

«Դուռը ապահովութիւն տուաւ թէ պատրաստելու վրայ է Հայոց վերաբերեալ կարգ մը տնօրէնութիւններու ծրագիր մը որ գոհացում պիտի տայ:

«Մայիս 21 թուականի ուսական ծանուցագիրը նմանապէս կ'ազդարարէ որ եթէ թիւրքիս վերջ մը չգնէ Հայոց դէմ գործածուած հարստահարական դրութեան, Ռուսիա ինքը պիտի պարտաւորուի միջամտել եւ վախճան մը գնել արդի կացութեան: Ռուսիա շատոնց է որ առանկ բուռն լեզու մը գործածած չէր: Ասոր մօտեցող վերջին անգամուան սպառնալիքը անցեալ տարի ըրաւ, Պայագիտէն ուսական հողը եղած քրթական արշաւանքին առթիւ:»



Ռուսական այս միջամտութիւնը անսպասելի նորութիւն մը պիտի չհամարուի մեր ընթերցողներուն: Թրանսվալի պատերազմին սկզբնաւորութենէն ի վեր է որ շարունակ կը շօշափենք այս խնդիրները: Այս էջերուն մէջ պարզուեցան անգլիական մամուլին էն ծանրակշիռ թերթերուն տեսութիւնները, որոնք ցոյց կուտային թէ Ռուսիոյ ձեռքերը ասիական թիւրքիոյ մէջ անկաշկանդ պահելու տրամադրութիւնը ընդհանրացած է. Պոլիսն իսկ Չարիկրատ կոչուելուն դէմ շատ ծանր առարկութիւն չի կայ:

Թիւրքիոյ նկատմամբ ուսական քաղաքականութեան մասին մեր համոզումները առանց վերապահումի յայտնած ենք միշտ: Ինչ որ ալ ըլլայ այդ քաղաքականութիւնը, որ հաւանօրէն Հայոց ըզձանքներուն գոհացում ապու սահմանուած չէ, փորձառութեամբ հաստատուած ճշմարտութիւն մըն է որ թիւրքիս միշտ ինքը կը կորսնցնէ երբ Ռուսիա ո՛ր եւ է թրքահպատակ քրիստոնեայ ցեղի մը դատը ինքն իր ձեռքը կ'առնէ: Օսմանեան պետութեան համար կենսական կարևորութիւն ունեցող խնդիրը այս կորուստն է, եւ սուլթանը իրաւունք ունի ծանրաձանր մտատանջութեանց մատնուելու: Փրկութեան միակ միջոց մը կայ թիւրքիոյ համար. Հայաստանը անմիջապէս երոպական վարչութեամբ օժտել: Բայց այդ իմաստութիւնը սուլթան Համիտէն չը սպասուիր:

ԹԻՒՐԳԻՈՅ ԶՈՐՍ ԿՈՂՍԸ

ԵՐԻՏՐԱՍՏՐԴ ԹԻՒՐԳԵՐԸ

«Երիտասարդ թիւրք» բացատրութիւնը հետզհետէ աւելի ընդարձակ առումով կը գործածուի: Ամէն անոնք որ Երլարըղի պալատին խմբակէն դուրս են ու կը տեսնեն սուլթանին կործանարար քաղաքականութեան հետեւանքները, ատոնք ամէնքն ալ ծայրայեղ դժգոհներ են, եւ ընդհանուր կերպով կ'ա՛մ Երիտասարդ թիւրքերու համակիր են, կ'ա՛մ անոնց գործակից:

Արտասահման գործող սպայակոյտը այժմ Լոնտոն պիտի կեդրոնանայ, ուր արդէն սկսած են Ժընէվէն գալ Օսմանլիի խմբագիրները, ու թերթն ալ քիչ ատենէն հոս կը փոխադրուի: Տամատ Մահմուտ փաշա որ հիմակ Բարիդ է, Լոնտոն պիտի գայ:

Հակասուլթանական կուսակցութիւնը նոր ուժ մը կը գտնէ Մուխթար փաշայի մէջ: Կ'ըսուի թէ սուլթանին Եզիպտոս ներկայացուցիչը հրամարական տուած է կայսերական ֆօմիսիերի պաշտօնէն, ու Գահիրէէն մեկնելով հեռադրած է սուլթանին թէ իր հրամարականը ընդունուի կամ ոչ ինք այլ եւս իր պաշտօնը պիտի չի շարունակէ, ու երբ Եզիպտոս վերադառնայ, հոն իբր սոսկական մարդ մը պիտի ապրի:

Ռուսեթիւրք պատերազմէն ետքը երկու զօրավար ժողովրդականութիւն շահեցան, Օսման և Մուխթար փաշաները, որոնց Ղազի տիտղոսը շնորհեց սուլթանը: Բայց երկուքն ալ վտանգաւոր համարելով, անոնցմէ մէկը Երլարըղը իր ձեռքին տակ պահեց բարձր պաշտօնով մը. իսկ միւսը Եզիպտոս աքսորուեցաւ իբր կայսերական բոմբէր: Օսման փաշա վերջերս մեռաւ, եւ Մուխթար փաշա միակ Ղազի տիտղոսակիր ժողովրդական զօրավարը մնաց: Հրամարականը զօր կուտայ բողոք մըն է սուլթանին վարչութեան դէմ: Ու երբ Մուխթար փաշա կը յայտարարէ թէ իր հրամարականը ընդունուի կամ ոչ ինք պիտի քաշուի մէկ կողմ, այս յայտարարութեամբ պարզապէս արտամբական դրօշը պարզած կ'ըլլայ, վասն զի սուլթանին հպատակ ո՛ր եւ է իսլամ պաշտօնեայ իր անձին տէրը չէ, այլ Խալիֆ-սուլթանին հրամաններուն հնազանդելու պարտական է միշտ: Երբ զօրավար-փաշա մը ինքզինքը այդ պարտականութենէն ազատ կը համարի իր ընթացքովը սուլթանին իշխանութիւնը արհամարհած կ'ըլլայ:

Տամատ Մահմուտ եւ Ահմէտ Մուխթար փաշաները միանան եթէ, հաւանօրէն Եզիպտոսի Խալիֆն ալ իրենց հետ է: Խալիֆը որոշած է Երոպա ուղեւորութիւն ընել եւ Լոնտոն ալ գալ. սուլթանը կը դժկամակի այս այցելութեան համար, եւ Գահիրէ կը մեքենայէ խաբանելու համար խալիֆական խորհրդին իրականացումը: Երլարըղին իբր գործիք կը ծառայելու Խալիֆին քարտուղար

Շիբրի պէյ, որ անպատշաճ վարձուք ունեցաւ այս պարագային մէջ, ուստի եւ պաշտօնանկ եղաւ: Քարտուզարը ինքնարգարացմանը համար ցոյց տուած է Պոլսէն բարձրաստիճան պաշտօնատարի մը իրեն զրկած հրահանգները: Տարակոյս չը կայ թէ հեղինակաւոր թիւրքերու Երրոպա գոմարումը ամենածանր մտահոգութիւն կը պատճառէ սուլթանին, վասն զի իրեն դէմ իսլամական ընդհանուր շարժումի մը վտանգը կը տեսնէ:

Կ. Պոլիս ալ իսկմաները խիստ հսկողութեան ներքեւ են: Մայիս 28 երկուշաբթի օր երկու բազմահմուտ իսլամ, Շէշն Ապտուլլահ եւ Էսաստ Էֆէնտի, ձերբակալուելով անմիջապէս շոգնաւ դրուեցան, եւ Հիճազ աքսորուեցան: Երկուքն ալ կը պատկանին «իսլամին առեզակը» կրօնական եղբայրակցութեան: Այս ընկերութիւնը վերջերս Պոլիս, Եգիպտոս, Բարիզ միևնոյն ժամանակ ժողովներ գումարեց: Իր բոլոր անդամները հրակողութեան տակ են: Եւ անոնց ամէն մէկ շարժումը կը դիտուի:

Սուլթանը ծայրայեղ տագնապի ենթակայ է. սպաննուելու վտանգն աւելի քան երբեք բռնուած է. վերջերս պալատին սպաններէն երեքը ձերբակալուեցան եւ բնտարկուեցան, վրանուն Երլտըզի ներքին յատկազիծը գտնուած ըլլալուն, որուն մէջ դնուած Լին սուլթանին ննջատենեակները տանող բոլոր ճամբաները: Բռնապետը տարակոյս չունեցաւ թէ իր վրայ զիշերային յարձակման մը դաւադրութեան ծրագիրը կը տեսնէր աչքին առջև: Դիւրին է երեւակայել զգացած սարսափը:

Համալ իր շուրջը կը նշմարէ հոգէառ Ազրայէլի դեգերումը, ամէն ձեռքի մէջ թոյն եւ դաշոյն կը տեսնէ. նոյն իսկ անասուններու ստամոքսը կասկածելի կը համարի: Անդլիական թերթերը Համիտի խանգարուած երեւակայութեան վրայ գաղափար մը տալու համար հետեւալ գուարճալի պատմութիւնը կ'ընեն:

«Սուլթանը համոզուեցաւ որ թարմ կաթը սքանչելապէս օգտակար է առողջութեան, որուն համար չափազանց հոգածու է, եւ որպէս զի կարենայ թարմ կաթ խմել, կովերը ամէն առտու իր պատուհանին առջև բերել կուտար, եւ վերէն աչքերովը կը հսկէր կ'ընումի դործողութեանը, եւ ապահով կը մտար թէ վտանգաւոր ո՛ր է նիւթ չխառնուիլ կաթին մէջ: Բայց եկու տես որ սուլթանին այս հանգստութիւնը բնաւ ձեռնադաշտ չէր զինքը շրջապատողներուն, որոնց շահը կը պահանջէ միշտ զանիկա տհաբեկ պահել, ուստի իրեն զիտել առին թէ նոյն իսկ իր աչքին առջև կ'ընուած կաթը կրնար թունաւորուած ըլլալ. բաւական էր որ նախապէս կովերուն թունալից սրնունդ տրուէր, կաթն ալ թունաբուս պիտի ըլլար: Այս նկատողութիւնը լսելով, Համիտ տակնուվրայ եղաւ, այլ ևս կովերը բերել չառաւ, եւ անկէ ի վեր զրկուած կը մնայ տաքուկ թարմ կաթ խմելու հաճոյքէն:»

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊԱՆՏՆՆՈՒՄՆԵՐԸ:
Միացեալ-Նահանգներու կառավարութիւնը տեսնե-

լով թէ Դուրը ո՛ր եւ է վճռական պատասխան մը չի տար ապրիլ 24ի ծանուցագրին, որով անմիջական հատուցում կը պահանջուէր հայկական կոտորածներու ատեն միտնաններու կրած կորուստին, հրահանգ զրկեց Կ. Պոլսոյ զեսպանատան զորձակատարին որպէս զի պահանջումը ստիպողաբար կրկնէ: Պ. Կրիմ մայիս 21ին թիւրքերոյ արտաքին գործերու նախարար Թէֆիզ փաշային յանձնեց նոր ծանուցագիր մըն ալ որ առաջինէն շատ աւելի ծանր լեզուով գրուած էր: Դուրը յանկարծակիի եկաւ, վասն զի այս խնդիրը եթէ ոչ բոլորովին մոռցուած բայց դէժ յետաձգուած կը կարծէր: Վաշինկթոնի կառավարութիւնը մինչեւ հիմակ դանդաղ շարժեցաւ, ոչ թէ ի սէր թիւրքերոյ, այլ իր համբերութեամբը Երրոպայի պետութեանց վրայ լաւ տպաւորութիւն մը առաջ բերելու նպատակաւ. բայց հիմակ այլ ևս երկար սպասելու պէտք պիտի չտեսնէ:

«Պալթիմօր» ամերիկեան զրահաւորը յուլիս 1ին Սուէզ կ'սպասուի, անկէ Միջերկրական երթալու համար:

ՄԱՒՍԻ ՅԱԻԵԼՈՒՄ

Թիւրքերոյ համար կենսական կարևորութիւն ունի ներմուծեալ ապրանքներու մաքսին յաւելման խնդիրը: Դուրը որոշած էր մայիս 1/14էն սկսեալ հարիւրին տասնը մէկի բարձրացնել հարիւրին ութ տուրքը, բայց պետութեանց ընդդիմադրութեան վրայ, պարտաւորուեցաւ ինչ որ որոշում էր իբր առաջարկ ներկայացնել: Դիտարանները այս առաջարկը նկատողութեան առին, եւ նպաստաւոր ընդունելութիւն ընելու տրամադիր կ'երևին, պայմանաւ որ մաքսատան կարգ մը դիւրութիւններ ընծայուին վաճառականութեան: Բայց իրենց կառավարութիւնները թուի թէ սկզբունքով համամիտ չեն այդ յաւելումին: Իւրաքանչիւր պետութիւն մասնաւոր առաջարկ մը ունի ընելիք: Սակայն էն մեծ ընդդիմադրութիւնը Բեղրպուրէն է, ուսական կառավարութիւնը իրեն հետ առնելով Ֆրանսան, արգելք կը դառնայ Դրան առաջարկին ընդունելութեանը, թէև այս երկու պետութիւնները երկաթուղիներու աներեւակայելի արածումութիւններ ստացան: Բայց Ռուսիա որ հիմակ Հայաստանի բարենորոգումներու խնդրովը Թիւրքիան սարսեցնելու տրամադիր կ'երևի, անշուշտ պիտի չուզէ որ այդ ողորմելի կառավարութիւնը նիւթապէս քիչ մը հանգստանայ, մաքսային հաստատ հասոյթներով, հասոյթներ որոնք ի հարկին հակառու ըսպառազին ութեանց կրնան գործածուիլ:

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին զրկել ա՛ն՝

L. FRANK,
27, CHESTERTON ROAD,
(ENGLAND) LONDON, W.

ՃԱՄԱՆՑ

ԵԶԱԿԱՆ ԴԱՏ ՄԸ

Մանչեսթրէն մայիս 30 քուակաւով մեզի կը գրեն. Երկ կայստեղ զատ մը տեանուեցաւ, իր տեսակին մէջ եզական: Բազմաթիւ հայոց հետ զատավարութեան ես ալ ուկնդիր էի. ինչ որ լսեցի ահա կը հազորդեմ: Բայց նախ եղելութիւնը երկու բառով պատմեմ:

Շարաթ մը առաջ հայ պատանի մը, լօտ 18-19 տարեկան, քաղաքիս Պ. Պաղտասար Խըւըրէլլէզեանի օֆիսը կը ներկայանայ և 1,000 ոսկինոց փոխանակագրի մը վճարումը կը խնդրէ: Մտուկը գործէն տեղեկութիւն չունենալով, թուղթը ներկայացնողը ուղղակի Պ. Խըւըրէլլէզեանին կը տանին: Պարոնը իբր իրմէն ստորագրուած փոխանակագիրը տեսնելուն պէս կեղծ ըլլալը կը հասկնայ, և տղուն քանի մը հարցումներ կ'ուղղէ, թուղթը ուրից ձեռքը անցած ըլլալը իմանալու համար: Պատանին առանց ո' և է բացատրութիւն տալու կը պահանջէ 1,000 ոսկիին անմիջական վճարումը, մինչեւ իսկ սպառնալիքներ ալ ընելով: Քաղքիս վաճառականները միշտ կը կա սկածին թէ «անոնցմէ» նաև Մանչէսթըր ալ գէմերնին ելողներ կրնան գտնուիլ: Պ. Խըւըրէլլէզեան կը կասկածի թէ ինչ որ կը վախնային ահա զլուինուն կուզայ: Դուրս ելլելով կ'երթայ խորհրդակցիլ ուրիշ վաճառակ աններու հետ, և անոնց խորհրդովը երկու տեքէթիլ կը բերէ հետը եւ պատանի ու փոխանակագիր կը յանձնէ զատական իշխանութեան. շարաթէ մը ի վեր տեղիս հայերը այս գործով կը զբաղէին, կարծելով թէ իրենցմէ տուրք հաւաքելու նոր դրութիւն մըն է: Այս գործն էր ահա որ երկէ զատարանին ներկայացաւ. բոլոր հայ վաճառակա նները ներկայ կը գտնուէին զատաստանին, սրուն մէջ հայ մը թարգմանի պաշտօնը կը վարէր: Սակայն խոռովեալ սրտերը շուտ հանգստացան, օրինական քանի մը հարցումներու տրուած պատասխաններէն, որոնք ծիծաղ գրողեցին: Հասկցուեցաւ թէ ձեռնարկը վախցուածին չափ լուրջ չէր: Այդ հարցումները զանց կ'ընեմ, եւ գործին վերաբերեալ կէտերը կ'ամփ ոփեմ, հարց-պատասխանիով:

Դատաւորը. Այս թուղթը քեզի ո՞վ տուաւ.

Պատուակին. Այդ քո գործը չէ:

Դատաւորը. Մըսթըր Խըւըրէլլէզեան կը յայտարարէ թէ ատանկ պարտք մը չունի:

Պատուակին. Այդ էլ իրա գործը չէ: Դաշնակցութեանս Ընդհանուր Ժողովը վճռել է թէ այդ նրա պարտքն է, ուրեմն նրա պարտքն է:

Դատաւորն ալ կարող չեղաւ ժպիտը զսպել: Պ. Խըւըրէլլէզեան իրողութիւնը հասկնալու համար քանի մը դիտողութիւններ ըրաւ իր փաստաբանին միջոցաւ:

Պ. Խըւըրէլլէզեան. Տղա՛ս, այդ փոխանակագիրը կեղծ է, ես դեռ ամիս մըն է որ Մանչէսթըր հաստատուած եմ, մինչդեռ այդ թուղթին թուականը երեքամիս առաջուան է:

Պատուակին. Այս Դաշնակցութիւնս ինչո՞վ է մեզաւոր որ զու էտ ժամանակ այս տեղ չես եղել: Այդ քո գործն է եւ ոչ թէ Դաշնակցութեանս:

Պ. Խըւըրէլլէզեան. Այս ստորագրութիւնը իմ գրովս ալ չէ:

Պատուակին. Քո անունը Պաղտասար չէ՞ է՞:

Պ. Խըւըրէլլէզեան (խնդալով). Այո՛:

Պատուակին. Քո ազգանունը Խըւըրէլլէզեան չէ՞ է՞:

Պ. Խըւըրէլլէզեան (խնդալով). Այո՛:

Պատուակին. Այս քաղաքում էտ անունով, էտ ազգանունով մի ուրիշին էլ ճանաչում ես:

Պ. Խըւըրէլլէզեան (խնդալով). Էյ ո՛չ:

Պատուակին. Էլ ինչի՞ ես բղղաւճւում: Անունը քոն է, ազգանունը քոն է, մի ուրիշին չես ճանաչում էտ անունով, էտ ազգանունով, էլ ինչի՞ ես ասում թէ սա քո պարտքը չէ:

Պ. Խըւըրէլլէզեան (ցաւակցական շեշտով). Բայց տղա՛ս, գի՛րը իմս չէ:

Պատուակին. Է՛հ, մի համալսարանական քեզնից լաւ է գրում քո անունը. էլ ի՛նչ ես ցանկանում:

Պ. Խըւըրէլլէզեան. Ընդունման թուականն ալ փետրուար 31 է. փետրուարը երբեք 29 օրը անցած է: Քեզի խաղ են ըրեր տղաս:

Պատուակին. (վսեմօրէն). Պարո՛ն, Դաշնակցութեանս Ընդհանուր Ժողովը վճռել է թէ փետրուար ամիսը պէտք է 31 օր լինի, ուրեմն 31 օր է: Դաշնակցութեանս վրէժիները վերաքննութեան չեն ենթարկվում:

Ա՛լ որուն վրայ հողի մնաց: Խնդալէն կողերնիս կը բռնէինք: Պ. Խըւըրէլլէզեան եղելութիւնը հասկցաւ. ըստ այնմ ալ հրահանգներ տուաւ իր փաստաբանին, որ դատաւորին յայտարարեց թէ պատանին ոճրագործ մը չէ, այլ պարզապէս ոճրագործներու միամիտ եւ անդիտակից գործիք մը, հաւտալով իր ներկայացուցած թուղթին վաւերականութեանը. ուրտի ոչ թէ պատմի պէտք է ենթարկուի այլ կարեկցութիւն գրաւէ: Դատաւորն ալ որ պատանին հոգեկան վիճակը հասկցած էր, ներողամիտ վրտուեցաւ, ու վճռեց տղան քիչ մը ատեն առողջատուն մը պահել տալ եւ ետքէն զրկել եկած տեղը:

Թարգմանը երբ պատանին իմացուց թէ իր գործը լաւ վերջացած է, տղան ուրութեամբ սկսաւ գոչել.

— Ուրեմն փողերը տալիս են, զենքերը պէտք է զննն:

Սակայն շուտ յուսախար ըլլալով սկսաւ արամաղին աղաղակել, աչքերը արցունքով լեցուած.

— Փողերը չեն տալիս, փողերը չեն տալիս:

Ու հանդարտօրէն արհամարհական ձայնով մը աւելցուց, զուրս տարուելու բուպէին.

— Ա՛յ ազատ Անգլիա որ ասում են սա է՛: Ես թեքել եմ այդ ազատութեան վրայ որ իրան թող է տալիս չընդունել մի յեղափոխական մարմնի վճիռը, եւ հաւատալ մի ինչ որ կեղտոտ չարչիի խօսքերին: Թուրքը իսկի սրանցից լաւ է: Թիւրքիայում մենք անում ենք, առնում ենք ինչ որ մեր քէյֆէրը ցանկանում է: Այս ազատութիւնը այսպէս է լինում:

Ունկնդիր
Վասն ճշգրտութեան ՍկեՊՏԻԿ